

ԳԱԳԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ
ԱՐՏԱՎԱՋԱՎԱՆՔԻՑ



ՄԵԿ ՎԻՄԱԳՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՄԱՏԵՆԱՇԱՐ

Ա

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ
ԱՐՏԱՎԱԶԱՎԱՆՔԻՑ



ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2021



A 108301

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ГАГИК Г. САРГСЯН

НОВОНАЙДЕННАЯ НАДПИСЬ ИЗ
МОНАСТЫРЯ АРТАВАЗАВАНК



ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ЕРЕВАН - 2021

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

GAGIK G. SARGSYAN

A NEWFOUND EPIGRAPH
FROM ARTAVAZAVANK



PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF
ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
YEREVAN - 2021



ՀՏԴ 930
ԳՄԴ 63.2
U 259

Գիրքը հրատարակության է երաշխավորել
«ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ Արսեն Հարությունյան, պատմ. գիտ. թեկնածու
Редактор: Арсен Арутюнян, кандидат ист. наук
Editor: Arsen Harutyunyan, PhD in History

U 259 **Սարգսյան Գագիկ Գ.**, Նորահայտ վիմագիր Արտավազավան-
քից: «ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
հրատարակչություն, Երևան, 2021, 82 էջ:

Саргсян Гагик Г., Новонайденная надпись из монастыря
Артавазаванк, Издательство института археологии и этногра-
фии, Ереван, 2021, 82 страниц.

Sargsyan Gagik G., A Newfound Epigraph from Artavazavank,
Publishing House of the Institute of Archaeology and Ethnogra-
phy, Yerevan, 2021, 82 pages.

1950–ական թթ. հուշարձանի տարածքում իրականացված պեղման-
մաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են արձանա-
գրված բազմաթիվ շինաքարեր, որոնց վերծանությունը հնար է տվել մե-
ծապես հարստացնելու Արտավազավանքի պատմության աղբյուրագի-
տական ատաղձը: Այդ շինաքարերից 15–ի վերծանությանն է նվիրված
սույն ուսումնասիրությունը:

В ходе предресставрационных раскопок проведенных в 1950-ые
годы на территории Артавазаванка, были обнаружены многочисленные
строительные камни с надписями, расшифровка которых во многом
обогастила источниковедческую базу истории памятника. Исследованию
надписи высеченной на пятнадцати камнях посвящена эта работа.

In the 1950 s during the excavation-cleaning works carried out in the
territory of the monument a lot of inscribed building stones were found, the
decipherment of which allowed to enrich the sourceological base of the
history of Artavazavank. This study is dedicated to the decipherment of the 15
building stones.

ISBN 978-9939-886-28-2

ՀՏԴ 930

ԳՄԴ 63.2

© «ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2021

ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ

Վ իմագիր բնագրերի վերծանությունը երբեմն լուրջ խնդիրներ է առաջադրում այդ գործն իրականացնող մասնագետներին: Հայերեն վիմագրերի մոտ 1500–ամյա տարեգրության մեջ պահպանվել ու մեզ են հասել քարեղեն բազմա-հազար վկայագրեր, որոնք անգնահատելի, հաճախ եզակի սկզբնաղբյուրային արժեք ունեն: Սակայն ոչ միշտ է հարթ ընթանում բուն վերծանությունը: Բոլոր վիմագրերի վրա, այս կամ այն չափով, արտահայտվել են բնական ու արհեստածին երևույթ-արհավիրքների դրոշմները, մարդու կողմից միտումնավոր կամ պատահական, երբեմն՝ անգետ գործունեության ու վարմունքի առավատչյալները, որոնց հետևանքները հաճախ վերծանող մասնագետներին լրջագույն գլուխկոտրուկներ, անլուծելի կամ մասամբ լուծելի թնջուկներ են մատուցում: Եղծված, հողմահարված կամ կոտրված տառերի, տառակապակցությունների, առանձին տողերի ու ամբողջ հատվածների կողքին վերծանության խնդրահարույց իրավիճակներ են ստեղծում նաև այն արձանագրությունների վերծանությունները, որոնց բնագրերը զետեղված են այս ու այն կողմ թափված բազմաթիվ շինաքարերի վրա: Այսօրինակ մի վիմագրի վերծանության պատմությունը վեր է ածվել գրեթե լեգենդի, որի բովանդակությունը պարզել է մեծանուն հայագետ, հնագետ ու վիմագրագետ Հ. Օրբելին: Անիի արշավախումբը 1906 թ. Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենց) եկեղեցու պատի տակ հայտնաբերում է շինաքարերի արձանա-

գրակիր 131 բեկոր: Պարզվում է, որ դրանք վերաբերում են մեկ վիճագրի, որի վերծանությունը ստանձնում է մեծանուն Ն. Մառը: Նրա կիսատ թողած գործը շարունակում է Աշխարհբեկ Քալանթարը և ավարտին հասցնում այդ բարդագույն վերծանությունը: Այս համատեքստի ուշագրավ օրինակ է Կոտայքի մարզի Արզակյան համայնքից մոտ 5 կմ հյուսիս-արևելք, անտառոտ տարածքում «ծվարած» պատմական Իշխանավանք (տեղացիների մոտ՝ Չորոտ) հուշարձանախմբի 1969-1970 թթ. պեղմանմաքրման աշխատանքների ժամանակ հայտնաբերված քառատող արձանագրությունը, զետեղված 15 շինաքարերի վրա:

Հայագիտության մեջ սակավադեպ են մեկ արձանագրության համակողմանի (պատմագիտական, հնագրական, անվանաբանական, բարբառագիտական, բառեզրային, լեզվաբանական և այլն) քննությանը նվիրված առանձին ուսումնասիրությունները: Դրանք, հիմնականում հրամցվել են հոդվածների տեսքով: Սակայն գիտական պարբերականներում երբեմն կարող են առաջանալ խնդիրներ՝ կապված տպագրական հնարավորությունների, էջաքանակի, լուսապատկերների ու գրչանկարների որակի ու քանակի հետ:

Նկատառելով հիշյալ հանգամանքների ենթադրյալ առկայությունը՝ Վիճագրության բաժինը նպատակահարմար է գտնում ստեղծել «Մեկ վիճագրի հանրագիտակ» գրքույկների մատենաշար, որի «հովանու» տակ հրատարակվելիք ուսումնասիրությունները կնվիրվեն մեկ արձանագրության համապարփակ քննությանը, կհամեմվեն անհրաժեշտ քանակությամբ լուսապատկերներով ու գրչանկարներով, ըստ հարկի նաև ամբողջական կամ միայն ամփոփումների օտարալեզու թարգմանություններով:

Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում մատենաշարի անդրանիկ գրքույկ-պրակը՝ վիճագրագետ Գ. Սարգսյանի «Նորահայտ վիճագիր Արտավազավանքից» ուսումնասիրությունը:

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՏԱՎԱԶԱՎԱՆՔԻՑ

Արտավազավանք հուշարձանախումբը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Արտավազ գյուղի արևմտյան ծայրամասում: Բաղկացած է երկու եկեղեցիներից: Համալիրի հյուսիսային հատվածում VI դարում կառուցված միանավ բազիլիկ եկեղեցին է, գլխավոր մուտքը՝ արևմտյան կողմից: Կառույցը հարավային կողմից բացված մուտքով առնչվում է ներքուստ կիսակլոր, արտաքուստ ուղղանկյուն հորինվածքով եռախորան կենտրոնագմբեթ եկեղեցու հետ, որը թվագրվում է VII դարով: Կառույցների հյուսիս-արևելքում տարածվում է մի քանի գեղաքանդակ խաչքարերով ու հարթ, ուղղանկյունաձև տապանաքարերով գերեզմանոցը:

Այսօր հուշարձանախումբը կիսավեր է: 1950-ական թթ. այստեղ իրականացվել են մաքրման աշխատանքներ, որոնց արդյունքում բացահայտվել են բազմաթիվ սրբատաշ շինաքարեր, նաև՝ արձանագրված: Դատելով նախկինում հրատարակված և պեղումներով հայտնաբերված արձանագրություններից (նախորդներից մի քանիսը չեն պահպանվել)՝ հուշարձանը բավական հարուստ է եղել վիմական արձանագրություններով, որոնք վանքի պատմության հիմնական սկզբնաղբյուրներն են:

Վանական միաբանության (կրոնական բնույթով՝ անապատ) հիմնադրման ու գործունեության պատմության վերաբերյալ մա-

տենագիր աղբյուրները խիստ սակավ են: Վաղագույնը վերաբերում է VII դարասկզբին. 607 թ. Աբրահամ Ա Աղբաթանեցի Հայոց կաթողիկոսի (607-615 թթ.) գահակալության կապակցությամբ հրավիրված Դվինի երրորդ եկեղեցական ժողովի մասնակիցների և այսպես կոչված «միաբանության թուղթը» ստորագրողների թվում հիշված է «Յոհանիկ Արտաւազդայ ապարանից»¹: Այս փաստաթուղթը նույն առիթով վկայված է նաև Ուխտանես պատմիչի երկում. «Յոհանիկ՝ Արտաւազդայ Ապարանից»²: Ուխտանեսի աշխարհաբար թարգմանության մեջ գրված է «Արտավազդի [վանաց երէց] Յոհանիկ»³: Եթե Յոհանիկի առնչությամբ «Գիրք թղթոց»-ում և Ուխտանեսի երկի գրաբար ու աշխարհաբար բնագրերում «տիրում է միակարծություն», ապա վանքի հարցում, առաջին հայացքից, շփոթ է, առաջինում՝ «Արտաւազդայ ապարանից», երկրորդում՝ «Արտաւազդայ Ապարանից», երրորդում՝ «Արտաւազդի», այսինքն՝ վանքի անունը եղել է մեզ անհայտ Արտավազդի ապարանք, հավանաբար, պալատ, դղյակ իմաստներով, Ապարան գավառի Արտավազդի վանք և ուղղակի Արտավազդի վանք: Վերջինիս առիթով թարգմանիչը մի ստորակետի տեղափոխմամբ հաջորդիվ նշված Աբաս և Որոյակ վաներեցներին համարել է ապարանցի. «Ապարանից [վանաց երէց] Որդեակը եւ Աբրահամը», իսկ Աբասին «Փարբիի [վանաց երէց]»: Մենք դժվարանում ենք մեկնաբանել մեծարգո հայագետ Վարազ Առաքելյանի սույն «փոխատեղումները»՝ հավաստի դիտելով Գիրք թղթոցի և Ուխտանեսի «Պատմութեան» գի-

¹ **Գիրք թղթոց**, Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901, էջ 151:

² **Ուխտանեսու եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս, 2010, էջ 553:

³ **Ուխտանեսու եպիսկոպոս**, Հայոց Պատմութիւն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրութիւնները՝ Վարազ Առաքելեանի, Երեւան, 2006, էջ 155:

տական հրատարակության հիշյալ հատվածները: Ինչ վերաբերում է անապատի անվանը, կարծում ենք, որ այն արտահայտվել է Արտավազդի ապարանք ձևով, ինչպես վկայված է մյուս հիշատակությունում: Այլ հարց է, թե ո՞վ է եղել Արտավազդը, կամ ի՞նչ ապարանքի մասին է խոսքը: Մ. Սմբատյանցը հոգևոր կենտրոնը նշում է «Արտաւազդայ Անապատ»⁴ ձևով: Վանքի անվան կապակցությամբ վճռական նշանակություն ունի սույն ուսումնասիրության խնդրո առարկա դարձած վիմական արձանագրությունը, որում որոշակի նշված է վանք-միաբանության կամ անապատի միջնադարյան ստույգ անվանումը՝ Արտավազավանք⁵: Վանքի անվան հաջորդ և վերջին մատենագրական վկայությունը հաղորդում է Ստեփանոս Օրբելյանը: Պատմելով Հայոց կաթողիկոս Մաշտոց Ա Եղվարդեցու (897-898 թթ.) մասին՝ նա անդրադառնում է ապագա կաթողիկոսի կենսագրության մի դրվագի, երբ նրա հայր Գրիգոր երեցը որդուն ուսման է ուղարկում Գեղարքունիքի հռչակավոր Մաքենյաց վանքի վանահայր Ստեփանոսի մոտ, որտեղ, հետագայում, նա ձեռնադրվում է քահանա: Ուսումնառությունը շարունակելու նպատակով Մաշտոցը «...երթեալ յանապատն Արտավազդի Ապարանք, և անտի գնաց մտանէ ի Սևան կղզին»⁶: Այսուհանդերձ տեղին ենք գտնում մասնակի անդրադարձը ինչպես վանքի, այնպես էլ եկեղեցիների անվանակոչությունների վիմական վկայություններին: Հուշարձանախմբի տարածքում և որմերին պահպանվել են

⁴ *Սմբատյանց Մ.*, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գավառի, Վաղարշապատ, 1890, էջ 296:

⁵ Մաղաքիա Օրմանյանը, խոսելով Մաշտոց Ա Եղվարդեցու ուսումնառության վայրերի մասին, հիշում է «Արտաւազդի անապատը» *Մաղաքիա Օրմանյան*, Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1151):

⁶ *Սրեփաննոս Օրբելեան*, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 173:

ամբողջական ու հատվածական 15 վիմագիր, որոնցից երեքը մեզ են հասել միայն Մ. Սմբատյանցի⁷ և Ե. Լալայանի⁸ ընդօրինակություններով: Արձանագրությունները մեծ մասամբ նվիրատվական բնույթի են: Վիմագրերում քանիցս, որպես նվիրառու, հիշատակված է վանքի Ս. Աստվածածին եկեղեցին, որը, դատելով հուշարձանախմբի զույգ եկեղեցիների չափերից, հորինվածքից, նշյալ վիմագրերի տեղադրությունից, թվում է, թե պետք է լինի համակառույցի հարավային շինությունը:

⁷ *Սմբատյանց Մ.*, էջ 365:

⁸ *Լալայան Ե.*, Նոր-Բայազետի գառառ, Նշանաւոր վանքեր, ԱՀ, 1912, 23, էջ 135:

ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ննության առարկան Արտավազավանք հուշարձանախմբի արևելյան ու հյուսիսային կողմերում, պատերին հենած կամ ուղղակի գետնին սփռված արձանագրակիր շինաքարերն են՝ հիմնականում բացահայտված մաքրման աշխատանքների շնորհիվ: Պարզվեց, որ այդ քարերից 15-ը մեկ արձանագրության մասերն են: Նկատի առնելով գրեթե ամբողջացված վիճաբի աղբյուրագիտական բացառիկ նշանակությունը և հնագրական առանձնահատկությունները՝ նպատակահարմար գտանք վկայագրի ուսումնասիրության արդյունքներն առանձին գրքույկով ներկայացնել գիտական հանրությանը:

Արձանագրությունը բաղկացած է 10 տողից և փորագրվել է երկու քարաշարի վրա: Առաջինից առկա է 8 քար՝ չորս ամբողջական և մեկ կիսաեղծ տողերով, երկրորդից՝ հինգ ամբողջական և մեկ կիսաեղծ (նախորդ քարաշարի վերջին՝ հինգերորդ կիսատողի ստորին հատվածը): Դատելով վերձանությունից՝ առաջին (վերին) քարաշարի բնագիրը գրեթե ամբողջապես պահպանվել է՝ բացառությամբ չորրորդ քարի ձախ կողմի երկու կամ երեք տառ ընդգրկող կտորված հատվածի և վերջին քարին աջից ենթադրաբար կցված, մեկ կամ երկու տառատեղ ընդգրկող շինաքարի: Փոքր-ինչ այլ է վիճակը ստորին քարաշարում: Այս-


տեղ քարերի պահպանվածությունը դիտարկելիս՝ որոշակիանում է առնվազն երկու նեղ (1-3 տառ ընդգրկող) քարերի բացակայությունը՝ երկրորդ և երրորդ քարերի միջև (1-2 տառատեղ) և չորրորդ ու հինգերորդ քարերի միջև (3-4 տառատեղ):

Տառերի պահպանվածության տեսակետից վատթար վիճակ է վիճագրի հինգերորդ տողում, որը «բախտի քմահաճույքով» փորագրվել է քարաշարերի կցման տեղում՝ քարեզրերին: Ըստ այդմ, այս տողի որոշ հատվածների վերծանությունը թերի ու թեական է:



**ՎԻՄԱԳՐԻ ՊԱՀՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԱՌԱՋԻՆ ՔԱՐԱՇԱՐ

Առաջին քար. Տողասկզբի բոլոր տառերը, ներառյալ V կիսատառ տողը, լիարժեք պահպանվել և անխաթար վերծանվում են:



Երկրորդ քար. Պահպանվածության ու վերծանելիության նույն վիճակն է, ինչպես նախորդում, բացառյալ IV և V տողերի վերջնամասի կտրված հատվածը, որտեղ հնարավոր է գրեթե ճշգրիտ վերականգնել տառերը. IV -ում՝ Ա, V-ում՝ ԱՆ⁹:



⁹ վերականգնումների տրամաբանությունը՝ ստորև:



Երրորդ քար. Տառերի գերազանց պահպանվածությունը մասամբ խաթարում է վերին աջ անկյան առաջին և երկրորդ տողերի կոտրվածքը, որտեղ, ելնելով հետագա շարադրանքի տրամաբանությունից, դյուրությամբ վերականգնվում են Վ, Ր տառերը: Վ կիսատառ տողի վերականգնումը պայմանավորում ենք միայն այդ քարի՝ տվյալ հատվածի գրեթե վստահելի վերծանությամբ, քանի որ II քարաշարի այս հատվածը լիովին եղծված-կոտրված է:



Չորրորդ քար. Առաջին չորս տողում տառերի վերծանության խնդիր չունենք: Վ կիսատողի վերականգնումը պայմանական է, նախորդիվ նշված պատճառով:



Հինգերորդ քար. Տողերի սկզբնամասի երկու կամ երեք տառ ընդգրկող հատվածը կտրված է: Այստեղ շարադրանքի տրամաբանությամբ վերականգնում ենք առաջին երեք տողերը՝ ԱՐ, ԱԲ, ԱԲ: IV տողում դժվարանում ենք վերականգնել բացա- կայող տառերը: V կիսատողը լիովին կտրված է:



Վեցերորդ քար. Տառերի պահպանվածությունը, գրեթե գե- րազանց է: Մի փոքրիկ հատված վերին աջ անկյունում, որտեղ փորագրված են եղել Ե տառի ուղղահայաց ստեղծի վերնամա- սը և աջ հորիզոնական փոքր ստեղծը: Այս քարին առկա է մի ուշագրավ երևույթ. Ստորին ձախ անկյունում ագուցված է եղել փոքր ուղղանկյուն քար, որի վերնամասում փորագրված են եղել IV տողասկզբի Ա Ծ Ա տառերի ստորին հատվածները:



Յոթերորդ քար. Անեղծ վիճակ է, միայն վերին ձախ անկյունում կտրված է մեկ տառատեղ՝ Տ: Վ կիսատողից ուրվագծվում են 4-5 տառերի վերնամասերը: Վ, ՎԻ, ՎԻԻ քարերի ստորին կիսատողերը վատ պահպանվածության պատճառով գրչագրված չեն:




Ութերորդ քար. Ընդհանուր անեղծ պատկերը խաթարել է վերին ձախ անկյան կտրվածքը, որտեղ, ըստ տրամաբանական վերականգնման, առաջին տողում փորագրված են եղել Կ՝ ՆԱԿԱ, երկրորդում՝ Յ, ՅՐԲ տառերը: Վ կիսատողում հազիվ նշմարվում են տառերի վերնամասերը: Գրեթե վստահ ենք, որ ՎԻԻ քարին կից շարվածքում եղել է նեղ, 1-2 տառատեղով քար, ըստ տողերի՝ Ն, ԱՐ, ԲՏ, Ս տառերով:




ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐԱՇԱՐ

Ի տարբերություն նախորդի այստեղ բացակայում է առավազն երկու շինաքար՝ II և III-ի միջև՝ 1-2 տառատեղով, III-ի և IV-ի միջև՝ 3-4 տառատեղով:

Առաջին քար. Վիմատեքստի պահպանվածությունը գերազանց է և լիովին վերծանելի, այդ թվում նաև՝ վերին կիսատողը (V-ի ստորին կիսատողը):




Երկրորդ քար. Պահպանվածության նույն վիճակն է, ինչպես նախորդում: Առաջին երկու քարերի վերին կիսատողը հավաստիորեն համադրվում է առաջին քարաշարի ստորին կիսատողերի հետ և ճշգրտորեն վերծանվում: Սա V տողի վերծանելի միակ հատվածն է:



Երրորդ քար. (ենթադրյալ). Այս նեղ քարին, ելնելով շարադրանքի տրամաբանությունից, ըստ տողերի փորագրված են եղել. ԷՍ, Կ, ԱԶ, ԱԿ, Մ:





Չորրորդ քար. Բնագիրը գրեթե լիարժեք պահպանված և վերծանելի է: Քարի ստորին ծախ անկյունում (X տող) կտրված է 1-2 տառ, իսկ աջ ծայրում՝ 1 տառ:



Հինգերորդ քար. (ենթադրյալ). Շարադրանքի տրամաբանությամբ այս քարին հնարավոր ենք համարում ԱՆՈՒ, ԱՍՏ, ԹԲՇ տառակապակցությունների առկայությունը (ըստ տողերի): IX-X տողերի վերականգնման հնար չունեցանք:



Վեցերորդ քար. Այստեղ տառերի (չկտրված) պահպանվածությունը, ըստ այդմ նաև վերծանելիությունը բավարար են, կտրված են վերջին երկու տողերի սկզբի 3-4 տառերը, որոնք անկարող եղանք վերականգնել: Շինաքարի աջ եզրակողը, առնվազն մեկ տառ, կտրված է, սակայն, առաջին երեք տողերում դրանք վերականգնելի են՝ Յ, Ս, Ե: Համեմատաբար պարզ երևակվում են քարի վերին կիսատողի տառերի ստորին հատվածները, սակայն վերծանելի են մի քանի տառ, որոնք, հաշվի առնելով տողի վերնամասի իսպառ ջնջվածությունը, անհնարին է ամբողջացնել ու վերծանել:



Յոթերորդ քար. Վիմագրահատվածը գրեթե անխաթար վիճակում է, կտորված է ձախ քարեզրի 1-2 տառ: Բացակայող տառերը հավաստի վերականգնվում են: Վերին կիսատողի պատկերը նույնն է, ինչպես նախորդում:



Ութերորդ քար. Շինաքարի տառակիր մակերեսը հիմնականում լավ է պահպանված, սակայն վերին աջ անկյունում առկա է կտորվածք, առաջին տողում՝ 4-5 տառ, երկրորդում՝ 2-3: Կտորվածքն ընդգրկում է նաև վերին կիսատողը՝ մի քանի կիսատառերի կիսաեղծ պատկերով:



Իններորդ քար. Շարքի վերջին քարը, բացառությամբ վերին կիսատողից (ամբողջ երկայնքով կտտրված է), լիարժեք վերծանվում է, միայն աջ կողմում մի բեկոր կտտրված է, սակայն տեղում է:



Մի ընդհանուր դիտարկում կիսատողերի վերծանության առնչությամբ. որոշ քարերի վրա, երբեմն պարզորոշ, գծագրվում են տառամասեր, սակայն մի քանի քարերի բացակայությունը հնար չի տալիս ճշտորեն համադրել վերին շարքի քարերը ստորինի հետ: Տողի վերծանությանը մեծապես խանգարում է նաև վերին քարաշարի՝ երեք և ստորինի՝ նույնքան քարերի համապատասխան կցահատվածների իսպառ կտտրված լինելը: Այսուհանդերձ, փորձեցինք հինգերորդ՝ կիսաեղծ տողում որոշ վերականգնումներ կատարել՝ նկատառելով քարաշարերի հատման հատվածում պահպանված և ուրվագծվող տառերի առկայությունը:

ՀՆԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առանձնահատկությունների առկայությունը հիմնականում «պտտվում է» Ա տառի շուրջը: Տառիս զույգ ուղղահայացներից աջակողմյանը 1/3-ով կարճ է մյուսից՝ Մ, իսկ կարճ հորիզոնական ստեղնը կցված է ոչ թե աջ կիսակլորին, այլ ավելի վեր՝ ուղղահայացին՝ հորիզոնական դիրքով: Սակայն առկա են մի քանի դեպք՝ ուղղահայաց հավասար ստեղններով, 8-րդ տողում՝ ՄՆԻՄՔԱՆ -ԱՆԽԱՓԱՆ, 9-րդում՝ ՄՆՆՆՑՅԱՔ-ՍԼԱՀՄԱՆԵՑԱՔ բառերում: Մայր տառը հիմնական ատաղձն է նաև կցագրերում: Դրանք երեքն են Մ-ԱՐ, Մ-ԱԻ, Մ-ԱՄ կամ ՄԱ:Մ կցագիրը 11 անգամ փորագրված է նաև առանց փոքր հորիզոնականի՝ Մ: Բացի նշված կցագրերից՝ հինգ անգամ օգտագործված է Ռ-ը:

ԲՆԱԳՐԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆԵՐ

Արդ, պատշաճ է անդրադառնալ արձանագրության կոտրված կամ եղծված հատվածների ու բացակայող շինաքարերի բնագրային վերականգնումներին՝ տող առ տող: Խոսքս ընթերցողին առավել մատչելի դարձնելու համար հարկ համարեցի նք ներկայացնել արձանագրության գրչագիրը և լուսապատկերը:

Առաջին տող. Երրորդ քարի վերին աջ անկյունում երկու կամ երեք տառ կոտրված են, սակայն հաշվի առնելով նախորդ ու հաջորդ բառերն ու բառակապակցությունները՝ վստահաբար վերականգնել ենք Ս և Վ,Բ տառերը: Առաջինի դեպքում նկատառելի ենք վիմագրում առկա ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ Ս, ՅԻՇԽԱՆՈՒԹԻ Ս բառաձևերը, իսկ երկրորդում՝ Վրաց թագուհի Թամարի և նրա որդի Լաշայի անունների նշումը: Հինգերորդ քարի ձախակողմյան կոտրվածքի վերևում արդեն հիշված տառերի վերականգնմամբ, ամբողջանում են (ըստ տողերի) ԹԱՄԱՐԻՆ, ՉԱՔԱՐԷԻ և ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ¹⁰ բառերը: 6-7 –րդ քարերի կցման տեղի կոտրվածքում տրամաբանորեն վերականգնել ենք Ե և Տ տառերը՝ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ Ս: Այս բառին հաջորդող ՏՐ ՎԱ տառակապակցությունը և հաջորդ քարի վերին ձախ անկյան կոտրվածքին հետևող ՆԻՆ տառախումբը ենթադրում են, որ այստեղ փորագրված է եղել ՎԱ-ով սկսվող և ՆԻՆ-ով ավարտվող անուն, որը տողավարտին նշված ՎՐԹԱՆԻՍԻ հետ վկայված են որպես հայրապետ: Առաջին անվանը կարող են «հավակնել» Վանականը և Վարդանը: Առաջին տողն ավարտվում է ՎՐԹԱ տառախմբով, իսկ երկրորդ տողն սկսվում է ԻՍԻ-ով: Տրամաբանորեն ՎՐԹԱՆԻՍԻ կարդալու համար պակասում է Ն տառը, որը, կարծում ենք, փորագրված է եղել IX չպահպանված քարին: Ստորև՝ տողի վերծանությունն ամբողջությամբ.

Ի ԹՈՒԼԻՆ] :ՈՒ: (1171), Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻԼԻՆ] ՎՐ] ԱՅ
 ԹԱՄ] ԱՐ] ԻՆ ԵՒ ԼԱՇԱԻՆ, Ի ՀԱՅՐԱՊԵ] Տ] ՈՒԹԻԼԻՆ] Ս
 ՏՐ ՎԱ] ՆԱԿԱՆԻՆ ԵՒ ՎՐԹԱ] Ն]

¹⁰ Վերականգնված տառերն ու տառակապակցությունները նշված են շեղատառով:

Երկրորդ տող. Այստեղ տառերի վերականգնման անհրաժեշտություն կա V և VIII քարերին և վերջին չգոյ քարին: V քարի ձախակողմյան կոտրվածքում հեշտությամբ վերականգնվում է երկրիս ամիրսպասալարի անվան ԱՔ տառագույգը և դրան հաջորդող Ա-ի ձախ ուղղահայացը կիսակլորի հետ՝ Ձ[ԱՔ]ԱՐԷԻ: Փոքր-ինչ խնդրահարույց է VIII քարի սկզբնահատվածի 2-3 տառատեղ ընդգրկող կոտրվածքի վերականգնումը: Անշուշտ, այստեղ հիշվում է XIII դարի նշանավոր ռազմաքաղաքական գործիչ, իշխան ամիր Բուբան: Այսինքն, ՈՒ-ից առաջ ուրվագծվող ուղղահայացի ստորին մասը հարկ է վերականգնել Բ: Սակայն առկա է մնում դրան նախորդող, հավանաբար, երկու տառերի հարցը: Այստեղ մեզ «օգնության շտապեց» նույն իշխանաց-իշխանի IV տողի (III քար) հիշատակությունը՝ ...ՄՈՅՐ ԲՈՒԲԱ...: Եթե II տողի (VII քար) ԲՈՒԲԱԻՆ նախընթաց պարզ կարդացվում է ԱՄՈ տառախումբը, իսկ IV տողում ԲՈՒԲԱ-ին նախորդում է ՄՈՅՐ տառակապակցությունը՝ գտնում ենք միանգամայն տրամաբանական երկրորդ տողի կոտրված տառերը վերականգնել ՅՐ, այսինքն՝ ԱՄՈՐ[ՅՐ Բ]ՈՒԲԱԻՆ, ինչպես IV տողում: Վերջում՝ չպահպանված քարին, փորագրված է եղել Մ-ԱՐ կցագիրը: Ստորև՝ տողի վերծանությունը.

ԻՍԻ ՅԻՇԵԱՆՈՒԹԻԼԻՆ]Ս ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՅ Ձ[ԱՔԱ]ՐԷԻ
ԵԻ ԻԿԱՆԷԻ ՅԱՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԻԼԻՆ]ԱՄ[ՈՅՐ Բ]ՈՒԲԱԻՆ,
ԵՄ[ՄԱՐ]-

Երրորդ տող. Վիմագրի առավել պահպանված ու լիարժեք վերծանվող տողերից է: Առկա է V քարի ձախ կոտրված հատվածի խնդիրը, որտեղ դյուրությամբ վերականգնվում են Ա, Ք տառերը և ամբողջանում է ՄԱՅՐ[ԱՔ]ԱՂԱՔԷՆ բառը: Տողավերջում՝ Ձ տառից հետո, քարեզրին պարզորոշ է Ա, Ս կամ Մ

տառի ձախ ուղղահայացը՝ ստորին կիսակլորի հետ: Նկատառելով IV տողասկզբի ԱԻԱԶԱՎԱՆՔ բառը կամ բառամասը՝ կարող ենք վստահաբար փաստել, որ այստեղ հիշատակված է վանքանապատի պատմական, իրական անունը՝ [ԱՐՏ]ԱԻԱԶԱՎԱՆՔ, այսինքն՝ տողավերջում, աջից կցված շինաքարին փորագրվել են կցագիր Ա-ԱՐ (կամ առանց աջակողմյան փոքր ստեղնի) և S տառերը: Ստորև՝ տողի վերծանությունը.

ԳԻՍ՝ ԱՇԱԿԵՐՏ ԳՈՇ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԵԼԻ Ի ՄԱՅ-
Ր[ԱՔ]ԱՂԱՔԷՆ ԳԵՏԿԱ, ԵԿԻ ՁՈՐՍ, ՈՐ ԿՈՉԻ ՍՎԱՆՁՈՐ,
ՊԱՐՈՆԱՅՔՍ ՏՎԻՆ Ձ[ԱՐՏ]

Չորրորդ տող. II քարի վերջում կոտրված է մեկ տառ, մասամբ եղծված Ձ տառի աջ կողքին նշմարվում է ուղղահայաց ստեղնի վերին մասը, որը, հիմնվելով երկրորդ տողում ԲՈՒԲԱԻՆ նախորդող հատվածի ԱՄՈՅՐ վերականգնման վրա, կարելի է կարդալ Ա և այստեղ նույնպես վերծանել [Ա]ՄՈՅՐ ԲՈՒԲԱՅՆ: Հարկ ենք համարում մատնանշել, որ Բուբայի բազմաթիվ վկայությունների թվում առկա չէ նրա պաշտոնանվան նմանօրինակ արտահայտչաձև:

Հաջորդիվ դժվարանում ենք վերականգնել V քարի ձախ կոտրված հատվածի 2-3 տառերը, չնայած Ե տառի ձախ կողմում նշմարվում է Մ տառի աջ ուղղահայացի վերին կարճ հորիզոնական ստեղնը և, թերևս, հնարավոր է Զ-ից առաջ կարդալ [Մ]ԵՔ: Տողավերջի Ք-ին, հավանաբար, հաջորդել է Ս տառը: Ստորև՝ տողի վերծանությունը.

ԱԻԱԶԱՎԱՆՔՍ ԻՆՁ [Ա]ՄՈՅՐ ԲՈՒԲԱՅՆ ԶՃԱԿԱՔ..[Մ]ԵՔ
ԶԱՍՏՈՒԻԱԾՂԱԾՆԻՆ ՏԱԻՆՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶԱՄԷՆ
ԵԿԵՂԵՑԻՔ[Ս]

Հինգերորդ տող. Փորձեցինք հինգերորդ՝ կիսաեղծ տողում որոշ վերականգնումներ կատարել՝ նկատառելով քարաշարերի հատման հատվածում պահպանված և ուրվագծվող տառերի առկայությունը: Յավոք, միայն առաջին քարաշարի երեք քարերի (I, II, IV) վրա է, որ վերականգնվում են տողի հատվածներն ամբողջությամբ (երրորդ քարին, չնայած ստորին կեսը բացակայում է, սակայն տողի վերնամասը դյուրությամբ վերականգնվում է), առավել պատկերավորության և դյուրըմբռնման համար գրչագրում ներկայացնում ենք նաև IV, VI տողերը.

ԱՆԸ ԱՎԱՆՔՄԻՆԶՄՈՅՐԲՈՒԲԱՅՆԾԱԿԷ
~~ԱՆԸ ԱՎԱՆՔՄԻՆԶՄՈՅՐԲՈՒԲԱՅՆԾԱԿԷ~~
 ԾԱՆՆԷԶՍԻԲՈՒԻՆՆԶՅՈՎԱՆՆԵ ԲԱՆԶԻԱՆԱՄ

Հինգերորդ տողի մնացյալ հատվածը, չնայած որոշ տառերի կիսատ ուրվագծերի առկայությանը, հնար չեն ընձեռում վերականգնել թեկուզ առանձին բառահատվածներ կամ տառեր:

Երկրորդ քարաշարի վիմագրահատվածի հնագրական ու բովանդակային քննությունը փաստում է առնվազն արձանագրված երկու քարերի բացակայությունը՝ II- III և III- IV քարերի միջև, առաջինը 1-2, երկրորդը՝ 3 տառատեղով: Ստորև՝ տողի հնարավոր վերծանությունը.

ԱՆԸ Է ՏՐ ՎԱՆԱԿԱՆ] ... [Ժ]ՈՂՈՎՈՒՐԴ...

ԳՈՃԵՔԱՐՈ...ՄԻԱՆՓՈՍԻ ՈՐ ՄԵ...

Վեցերորդ տող. Տողակգրի ԾԱՆՆԷ տառախումբը, թերևս, շարունակությունն է նախորդ կիսաեղծ տողի, քանի որ այն ինքնուրույն իմաստ չի արտահայտում: Փոքր-ինչ անհասկանալի վիճակ է երկրորդ քարին փորագրված ԶՅՈՎԱ.ՆՆԷ բառում:

Ա և ՆՆ տառերի միջև առկա է բավական եղծված Ե հիշեցնող տառ: Անվան մեջ Ե տառի վերականգնումը անլուծելի վիճակ է ստեղծում բառիս վերծանության համար, հատկապես երկրորդ Ն-ին հաջորդող «անհայտությունը»: Այս իրադրությունում անհավանական չենք համարում ենթադրյալ Ե տառի ավելորդագրությունը, նկատառելով նաև տառի կամ տառատեղի՝ ի սկզբանե եղծված լինելը: Այս վարկածի համատեքստում, հաջորդ չպահպանված քարին «զետեղելով» ԷՍ կամ ՌԻ տառերը, ըստ որի՝ կարդալ ԶՅՈՎԱՆՆԷՍ կամ ԶՅՈՎԱՆՆՈՒ: Անհամեմատ դյուրությամբ է վերականգնվում մյուս «կորած» քարին փորագրված հատվածը: III պահպանված քարի աջ եզրին առկա Տ տառը և IV-ի սկզբում պարզ կարդացվող ՏԷՐՔՆ տառախումբը աներկբա կանխորոշում են Տ[ԱՆՈՒ]ՏԷՐՔՆ բառեզրը:

IV և V պահպանված քարերի կցման հատվածը երկու կողմից վնասված է: Առաջին քարի վերջում Ա-ի և երկրորդի սկզբում ուրվագծվող Գ տառի առկայությունը ենթադրում է տեղում Յ տառի վերականգնումը՝ Ա[Յ]ԳԻՔ, որը, մեր կարծիքով, այդուհետ շարադրանքի տրամաբանության համատեքստում է: Խնդրահարույց է VI քարի աջակողմի 3-4 տառատեղով հատվածի վերականգնումը: Ստորև՝ տողի վերծանությունը.

ԾԱՆՆԷ ԶՄԲ ՌԻԽՏՆ ԶՅՈՎԱ.ՆՆ[ԷՍ] ՇԻՆԵՑԻ, ԱԻԱՆԱ
Տ[ԱՆՈՒ]ՏԷՐՔՆ ՏԿԻՆ :Ա[ՅԳ]ԻՔ Ի ՓԱՏԼԿԱՆՑ Վ[Ե]ՐԻ
ՀՈՂ[Ն]...ՏԷՊԱՏ, ԵՍ՝ ՍԱՐ-

Յորթերորդ տող. Առաջին բացակայող քարին, առաջնորդվելով բովանդակային տրամաբանությունից, կարելի վերականգնել ՍԿ կամ միայն Կ, իսկ մյուսում՝ ԱՍՏ. ԵՂԲԱՐՑ[Ս Կ]ԱՄԱՔՅՈՒԹԹ Հ[ԱՍՏ]ԱՏԵՑԻՆ: Պահպանված V քարի ձախ կոտրված

եզրին վերականգնելի է Ս տառը՝ [Մ]ԱՐԳՍԻՆ, իսկ հաջորդ քարի աջակողմում ենթադրելի է վերականգնել

ԵԼ Ա՝ ՊԱՏԱՐԱԳԻ ԵԼ ԱՂՄԵՆՈՒ:

Ստորև՝ տողի վերծանությունը.

ԳԻՍ ԻՄ ՅՈՒԺԱՐՈՒԹ՛ԵԱՄ]Բ ԵԻ ԵՂԲԱՐՅ [Կ]Ա

ՄԱՔՑՈՒԹ՛ԵԱՄ]Բ [ՀԱՍՏ]ԱՏԵՑԻՆ ԶՄԲ [Մ]ԱՐԳՍԻՆ

ՏԱԻՆԻՆ ԶՊԱՏԱՐԱԳԻ ԵԼ ԱՂՄԵՆՈՒ :Ա: ԵԶՆ Մ

Ութերորդ տող. Առաջին քարի աջ եզրին փորագրված տառի ձևաչափը անհարիր է վիմագրի որևէ տառի նկարագրին՝ **ԻՆՋԱՆ**: Այս տառի ստույգ վերականգնմանը կարող են նպաստել նախորդող ու հաջորդող բառերի իմաստը, սակայն աներկբա է, որ տառի «ինքնությունը» նախևառաջ որոշվում է իր գրաձևով, ինչն էլ, իր հերթին, ստուգելի է վիմագրում նմանօրինակ մյուս տառերի գրաձևերով: Իմաստային առումով տառու հավանական է կարդալ Ձ՝ ԻՆՁ, չնայած վիմագրի Ձ նշանագրերը, թվով 3, գծապատկերով անհամեմատ տարբեր են: Մյուս տառը, որին թվացյալ կարող է նմանվել մեր տառակերպը՝ Չ-ն է, այսինքն՝ ԻՆՉ: Այս տառը դասական գրչությամբ օգտագործված է մեկ անգամ, IX տողի ՈՉԻԱՐ բառում: Սակայն այդ համատեքստում առաջանում է խնդիր՝ իմաստային տեսանկյունից:

Առաջին բացակա քարին դյուրությամբ վերականգնվում է ԱԶ՝ նկատառելիվ ձախից Բ, աջից ՈՒՄ տառերի առկայությունը: Նշվածի արդյունքում ամբողջանում է Բ [ԱԶ]ՈՒՄ բառը, հետևապես, որ դրան հաջորդում է ԱՇԻԱՏՈՒԹ՛ԵԱՄ]Բ բառը, իսկ այս բառերի համադրմամբ արտահայտությունը քանիցս վկայված է վիմագրերում և ոչ միայն:

Երկրորդ բացակա քարին փորագրված է եղել ԹԲՇ տառախումբը որպես նախորդ և հաջորդ բառերի տառային բաղկացուցիչ՝ ԱՇԽԱՏՈՒԿ **ԹԼԵԱՍ Բ Շ** ԻՆԵՑԻ:

Վ քարի սկզբի կտորված մասում հեշտությամբ վերականգնվում է Ե տառը՝ ԵԿԵՂ **Ե** ԻՑԻՔՍ: Ստորև՝ տողի վերծանությունը.

ԱՏԱՂ ԻՆԴՁ ԸՆԽԱՓԱՆ ԵԻ ԵՍ ԲՄԱՂՈՒՄ ԱՇԽԱ
ՏՈՒԿ **ԹԼԵԱՍ Բ Շ** ԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԵԻ ԲՈԼՈՐՈՎԻՆ
ԶՎԱՆՔՍ ՅՄԱՂԱԳՍ ԵՂԲԱՐՑ

Իններորդ տողի վերծանությունն առանձնանում է մի շարք թնջուկներով, որոնք արդյունք են որոշ հատվածներում քարի մակերեսի քայքայվածության ու կտրտվածության: Առաջին քարի երրորդ, չորրորդ տառերը մասամբ եղծված են, սակայն ուրվագծվում են ԱՐ (կցագիր) և Ե տառերը: Առավել «խոցելի» է երկրորդ քարի Գ-Զ միջակայքի տառերի վերծանությունը: Սակայն լիարժեք երևացող և ուրվագծվող տառերի ու տրամաբանության «համագործակցությամբ» հնարավոր եղավ, կարծում ենք, հավաստի վերականգնել խնդրո առարկա տառախումբը՝ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻ: Առաջին բացակա քարին աներկբա եղել են Ա և Հ տառերը, որոնք, տեղադրելով Ս և ՄԱՆԵՑԱՔ տառակապակցությունների միջև, իմաստավորվում է Ս **ԱՀ** ՄԱՆԵՑԱՔ բառը:

Նույնը հնարավոր չէղավ դիտարկել երկրորդ բացակայող քարի տառերի վերականգնման համար, ինչին նպաստեց նաև նախորդող անորոշ ՃԱ և հաջորդող եռատառ կտորված հատվածը:

Պահպանված Վ քարի ձախ կողմի մեկ կամ երկու տառատեղ կտորվածքում պայմանականորեն վերականգնել ենք Ն տառը՝ ամբողջացնելով այսօր քաջածանոթ, բայց միջնադարում չօգտագործված (գրաբարի բառարաններում մեզ չհանդիպեց)

ՆԱԽՐԷՊԱՀ (ՊԱՆ) բառեզրը: Առավել տարածված է եղել «նախորդ»-ը: Ստորև՝ տողի վերծանությունը.

Ս ԿԱՐԵԼԱՅ ԿԱՐԳԱԻՈՐՈՒԹԻԻՒՆՆ ԶԱՅՍ ՍՐԱՀՄԱՆԵՑԱՔ
ՃԱՐՆ...ՈՒ ՈՉԽԱՐՈՂՆ ՆԱԽՐԷՊԱՀԷ ԿԱՄ ՁԻ ԿԱՄ
ԱԻՐԱՎԱՐ ԱՌՆԷ ԿԱՄ ԽՈ

Տասներորդ տող. Դժվար վերծանելի է երկրորդ քարի Յ-ԱՅ տառերի միջակայքը, որտեղ, բավական եղծված վիճակում ուրվագծվում է ԵՂԱՆ տառախումբը, որը մեծագույն ցանկության դեպքում միայն կարող ենք նույնացնել գյուղատնտեսական հայտնի գործիքի հետ: Առաջին կորած քարին վերականգնել ենք Մ՝ նկատի ունենալով նաև վիմագրի՝ հատկապես վերջին տողերում ԿԱՄ շաղկապի քանիցս օգտագործումը: Երրորդ քարի տողասկզբում կոտրված է մեկ կամ կցագրված երկու տառ: Կոտրվածքի և Ք տառի միջև առկա է Գ, Դ կամ Ի տառերին հարազատ աջակողմյան կարճ հորիզոնական ստեղնը: Մենք հնարավոր ենք համարում այստեղ տեսնել Ի տառամասնիկը և ամբողջ բառը վերծանել ԿԱՄ ՄԱԻՔ:

Անհնար գտանք վերականգնել չպահպանված երկրորդ քարի եռատառը և հաջորդ քարի սկզբի 3-4 տառերը: Հակված ենք կարծելու, որ այս տողում շարադրված է հիմնականում նվիրատվական, մասամբ նաև կանոնաիրավական վիմագրերում բազմիցս կիրառված նզովման բանաձևը (ոչ պարոնները, ոչ ազատները չհամարձակվեն խելել կամ խափանել նվիրատվությունը): Ըստ այդմ, հինգերորդ քարի սկզբում փորձել ենք վերականգնել ՓԱՆ տառախումբը և այն կցել նախորդ քարավերջի ԽԱ տառակապակցության և ՊԱՐՈՆ-ից առաջ կարդացվող Ա տառին: Հաշվի առնելով նաև բառակապակցության ընդհանուր տրամաբանությունը՝ պայմանականորեն վերականգնեցինք ԽԱՄ ՓԱՆԱ,

թերևս, բարբառային բառը: Տողն ավարտվում է :ՅԺԸ: (318)
ՀԱՅՐ բառակապակցությամբ: Հակված ենք կարծելու, որ շա-
րունակությունը՝ ՀԱՅՐ[**ԱՊԵՏԱՅՆ ՆՂՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ...**], փո-
րագրված է եղել երրորդ քարաշարին, որը չի պահպանվել:
Ստորև՝ տողի վերծանությունը.

ՏՀԱՐՈՒ ԿԱՄ Ա ԵՂԱՆԱՅՍ ԿԱ[Մ] ՔՏԱ ԿԱՄ ՀԱ...ԽԼԷ ԿԱՄ
Խ[ԱՓԱՆԷ] ՊԱՐՈՆ ԿԱՄ ԱՂԱՏ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ :ՅԺԸ:
ՀԱՅՐ[**ԱՊԵՏԱՅՆ ՆՂՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ**]...:

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ
ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. Ի ԹՈՒԼԻՆ] :ՈՒ: (1171), Ի ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻԼԻՆ] ԿՐԴԱՅ ԹԱՄԼԱՐԻՆ ԵՒ ԼԱՇԱԽՆ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՆԻԿԻԿԻՆ]Ս ՏՐ ՎԱՐՆԱԿԱՆԻՆ ԵՒ ՎՐԹԱՎՆ]
2. ԻՍԻ ՅԻՇԽԱՆՈՒԹԻԼԻՆ]Ս ՀԱՐԱՋԱՏ ԵՂԲԱՐՅ ՁԼԱՔԱՂԷԻ ԵՒ ԻՒԱՆԷԻ ՅԱՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԻԼԱՆ] ԱՄՈՅՐ ԲՆՈՒԲԱԽՆ, ԵՍ՝ ՍԱՐԴ-
3. ԳԻՍ՝ ԱՇԱԿԵՐՏ ԳՈՇ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԵԼԻ Ի ՄԱՅՐԼԱՔԱՂԱՐԱՔԷՆ ԳԵՏԿԱ, ԵԿԻ ՁՈՐՍ, ՈՐ ԿՈՂԻ ՍՎԱՆՁՈՐ, ՊԱՐՈՆԱՅՔՍ ՏՎԻՆ ՁԼԱՐՏ]
4. ԱԻԱՋԱՎԱՆՔՍ ԻՆՁ ԼԱՄՈՅՐ ԲՈՒԲԱՅՆ ՋՃԱԿԱՔ...ԼՄԻԵՔ ՋԱՍՏՈՒԽՈՒՄԾԵՆԻՆ ՏԱԽՆՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ՋԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔԼՍ]
5. ՎԱՆԷՆ Է ՏՐ ՎԱՆԱԿՎԱՆ]... ԸՂՈՂՈՎՈՒՐԴ ...ԳՈՃԵՔԱՐՈ... ՋԱՐՔՍ... ՄԻԱՆՓՈՍԻ ՈՐՄԵ... ՐՔՍ...ՄԻԱՆՓՈՍԻ ՈՐՄԵ...
6. ԾԱՆՆԷ ՋՄԲ ՈՒԽՏՆ ՋՅՈՎԱ.ՆՆԼԷՍ] ՇԻՆԵՑԻ, ԱԻԱՆԱ ՏԼԱՆՈՒՆՏԷՐՔՆ ՏՎԻՆ :ԱՅԳԻՔ Ի ՓԱՏԼԿԱՆՅ ՎԵՂՐԻ ՀՈՂՆ] ...ՏԵՊԱՏ, ԵՍ՝ ՍԱՐ-
7. ԳԻՍ՝ ԻՍ ՅՈՒԺԱՐՈՒԹԼԵԱՄ]Բ ԵՒ ԵՂԲԱՐՅ ԼԿՆԱՄԱՔՅՈՒԹԼԵԱՄ]Բ ԼՀԱՍՏՆԱՏԵՑԻՆ ՋՄԲԼՍՆԱՐԳՍԻՆ ՏԱԽՆԻՆ ՋՊԱՏԱՐԱԳԵԼ ԱՂՄԵՆՈՒ

8. ԱՏԱՂ Ի ՆՂԱՆԽԱՓԱՆ ԵՒ ԵՍ ԲՐԱՂՈՒՄ
ԱՇԽԱՏՈՒԹ՛ԵԱՄ՝Բ ՇՆԻՆԵՑԻ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ
ԲՈԼՈՐՈՎԻՆ ԶՎԱՆՔՍ ՅՐԱՂԱԳՍ ԵՂԲԱՐՑ
9. Ս ԿԱՐԵԼԱՅ ԿԱՐԳԱԻՐՈՒԹԻԼԻՆ՝ ԶԱՅՍ
ՍՐԱՀՄԱՆԵՑԱՔ ՃԱՐՆ՝...ՈՒ ՈՂԽԱՐՈՂ ՆՂԱԽՐԷՊԱՀԷ
ԿԱՄ ԶԻ ԿԱՄ ԱԻՐԱՎԱՐ ԱՌՆԷ ԿԱՄ ԽՈ
10. ՏՀԱՐՈՒ ԿԱՄ Ա ԵՂԱՆԱՅՍ ԿԱՐՄ՝ ՔՏԱ ԿԱՄ ՀԱ...ԽԼԷ
ԿԱՄ ԽՐԱՓԱՆԷՂ ՊԱՐՈՆ ԿԱՄ ԱԶԱՏ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ
:ՅԺԸ: ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՆՂՈՎԵԱԼ ԵՂԻՑԻՂ...:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

Աղբյուրագիտական բացառիկ արժեք ունեցող այս վկայագիրն իր բնույթով շինարարական-նվիրատվական է: Վիմագրի «հերոսներն» են XIII դ. առաջին տասնամյակի առավել նշանավոր անձինք, որոնց՝ թեկուզ համառոտ անդրադառնալն անհրաժեշտ ենք համարում ոչ միայն բացահայտելու նրանց առնչությունը վանական միաբանությանը, այլև ճշգրիտ թվագրելու արձանագրությունը: Խնդիրն այն է, որ առաջին տողի սկզբում, միանգամայն պարզորոշ նշված է թվականը՝ ՈԻ (1171), որը, սակայն, դույզն-ինչ չի համապատասխանում հիշատակված անձանց ժամանակագրությանը: Ըստ այդմ, ամենայն պատասխանատվությամբ կարող ենք փաստել, որ նշյալ թվականը, ի մասնավորի՝ Ի (20) տասնավորը բացահայտ վրիպակ է: Ահա այս թնջուկի բացահայտմանն է միտված նշյալ անձանց վերաբերող թվականների քննությունը:

Վիմագրում առաջինն «ի պաշտոնէ» հիշված է Վրաստանի (թերևս նաև Հայաստանի) թագավոր Թամարը և որդին՝ Գեորգի Լաշան: Թամարը ծնվել է 1166 թ., 1178-ից գահակցել է հորը՝ Գեորգի III-ին, թագուհի է հռչակվել 1184-ին: 1185-ին ամուսնացել է Վլադիմիր-Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրիի (Գեորգի) հետ: 1187-ին, վերջինիս անբարո

վարքի ու պահվածքի համար, բաժանվել է ամուսնուց և նրան արքորել Կոստանդնուպոլիս: 1189-ին Թամարն ամուսնանում է ավանների արքայորդի Դավիթ Սոսլանի հետ: 1191-ին ծնվում է նրանց որդին, ապագա թագավոր Գեորգի IV Լաշան (1213-1223 թթ.): Թամար թագուհու կյանքի և գահակալության մայրամուտի ժամանակաշրջանը, ներառյալ մահը, մասնագիտական գրականության մեջ հավաստի տվյալների չգոյության ու անարժանահավատության պատճառով ստույգ չի թվագրվել: Մահվան թվականի կապակցությամբ վրացագիտության մեջ գոյություն ունի լայն տարակարծություն: Հարկ է մատնանշել այդ կարծիքներից մի քանիսը. Մ. Բրոսսե՝ 1212-1214 թթ. (Ջաքարե ամիրսպասալարի մահից հետո), Թ. Ժորդանիա՝ 1213 թ., Ի. Ջավախիշվիլի՝ 1207 թ., Կ. Կեկելիձե՝ 1216 թ., հունվարի 27, Ս. Կակաբաձե՝ 1207 թ.:¹¹ Խնդրին համառոտ անդրադարձել է Պ. Մուրադյանը՝ մատնանշելով սկզբնաղբյուրներում հիշատակված 1191, 1207, 1210 թթ.:¹² Անվանի հայագետ-վրացագետի կարծիքով առավել հավանականը 1207 թ. է: Վիմագրում Թամարի հետ հիշված է նաև որդին՝ Գեորգի Լաշան: Նրանց համատեղ վկայությունը, թերևս առհավատյա է նրանց միաժամանակյա և միասնական թագակալության, ինչը, ըստ պատմագիտական տվյալների, եղելություն է: Երբ 1206 թ. կամ 1207թ. Թամարի ամուսին Դավիթ Սոսլանը մահանում է, թագուհին 15-ամյա

¹¹ *Խ. Թորոսյան*, «Թագակիրների պատմությունն ու գովաբանությունը» որպես Ջաքարյան Հայաստանի ու զաքարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 570-573:

¹² Վրաց ժամանակագրություն (1207-1318 թթ.), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 193-194:

որդուն կարգում է գահակից: Գեորգի Լաշան պաշտոնապես թագավոր է հռչակվել 1213 թ.:

Անհրաժեշտություն չենք տեսնում մտնելու վրաց թագավորների գահակալության ժամանակագրական թնջուկի մեջ: Մեզ առավել հետաքրքրում է այն ժամանակահատվածի ճշգրտումը, երբ մայր ու որդի որպես գահակալներ միասին են հիշատակվում, ինչպես մեր վիմագրում: Փորձենք, երբեմն իրարամերժ, երբեմն իրար լրացնող վկայությունների ու փաստերի հաշվառմամբ՝ խնդրին տալ տրամաբանական հանգուցալուծում (մեր կարծիքով): Սկզբնաղբյուրներում առկա են երկու վկայություն, որոնք, թերևս այլակարծության առիթ չեն տվել. Դավիթ Սոսլանի մահվանից (1207թ.) հետո Գեորգիի գահակից հռչակվելն է, մյուսը վերջինիս պաշտոնապես (միայնակ) թագավորելու սկզբնաթիվը՝ 1213 թ.: Ըստ այսմ՝ հավանական ենք համարում մեզ հետաքրքրող ժամանակահատվածը դիտարկել 1206/1207-1212/1213թթ. միջակայքում:

Պարզաբանման կարոտ է հաջորդ բառակապակցությունը՝

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻ ՏՐ ՎԱՆԱԿԱՆԻՆ ԵՒ ՎՐԹԱՆԻՍԻՆ:

Նախ, հարկ է պարզել «հայրապետ»-ի հարցը: Վիմագիր տեքստերում (և ոչ միայն) «հայրապետ» հորջորջմամբ հանդես են եկել կաթողիկոսները, եկեղեցական թեմերի և վանքերի առաջնորդները: Բացառում ենք կաթողիկոսի վարկածը, քանի որ նշված անուններով կաթողիկոսներ հայոց եկեղեցական գահին չեն նստել: Նախքան թեմակալի կամ վանահոր խնդրին անդրադառնալը՝ փորձենք ճշտել առաջին, մասամբ եղծված, անձնանունը՝ ՎԱ...ՆԻՆ, որի միջնամասում կոտրված են 3-4 տառ: Մենք առավել հակված ենք այստեղ վերականգնել ՎԱՂՆԱԿԱՂՆ անունը, ինչի համար հիմնական կովան է քարաշարերի երկրորդ

քարերի կցման հատվածում կիսատողերի համադրման արդյունքում վերծանված ՏՐ ՎԱՆԱԿԱՆԻ անունը: Քննության առարկա ժամանակաշրջանում Վանական անունով բարձրաստիճան հոգևորական, որ կարող էր ի պաշտոնե և ի կոչումե հավակնել հիշյալ անձին՝ թերևս Սևանի Հայրավանքի մի ուշագրավ ու արժեքավոր վիմագրում վկայված նույնանուն հոգևորական գործիչն է: Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել արձանագրության հիմնական հատվածը.

Ի ԹՎ ՀԱՂՈՅ] :ՈԿ: (1211) ՆՈՐՈԳԵՑ/ԱԻ ԵԿԵՂԵՑԻՍ
 ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒ/ԹԵ ՅՈՎԱՍԱՓԻ ԵՒ ՆԵՐՍԻՍԻ. ՄԵԾ
 ՍՊԱՐ/ԱՊԵՏՆ ԲՈՒԲԱՅՆ ՏԵՐ ԵՐԿՐԻՍ, ԵՏ Յ/ԱՌԻՆՋՔ
 ԶԱՅԳԻՆ ՈՍԿԵԲԱԿՍ, ՈՐ Է / ԱՌՈՒ ՔԱՆԱՔԵՌՈՒ :Բ: ԱԿՆ
 Զ/ԱՂԱՅ Ի ՆՈՐԱՇԻԿ: ՏՐ ՎԱՆԱԿԱՆ ԵՏ՝ ԶԽԱԺԼԻ
 ԶԱԳՆ, ՈՐ ԲԵՐԴԱԺՈՂՈՎՈՒՐԴ / ՎԱՆԻՑՍ ԿԱՐԳԵՅԱՔ...:13

Վիմագրին շահեկան անդրադարձ է կատարել հայ վիմագրագիտության երախտավոր Սուրեն Ավագյանը, ի մասնավորի՝ քննության առարկա դարձնելով տեր Վանականի անձը և նրա կատարած նվիրատվությունը: Չճշգրտելով սույն նվիրատուի ով լինելը՝ հեղինակը նրան համարում է «Հայրավանքի վերադաս հոգևոր առաջնորդ»¹⁴, քանի որ վանքի բուն առաջնորդները հիշված են վիմագրում՝ Հովասափը և Ներսեսը: Կարծում ենք, որ այդպիսի «վերադաս հոգևոր առաջնորդ» կարող էր լի-

¹³ Դիվան հայ վիմագրության, պր. IV, Երևան, 1973, էջ 69, արձ. 261: Ս. Բարխուդարյանը Վանականին չի ընդգրկել Դիվանի անձնանունների ցանկ, հավանաբար, ինչպես Ս. Ավագյանն է կարծում, այն դիտել է «իբրև հասարակ անուն»:

¹⁴ Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 179:

նել Բջնիի կամ Արարատյան թեմի, թեկուզ, Բջնիի վանքի առաջնորդը: Նվիրատվության կապակցությամբ Ս. Ավագյանը եզրահանգում է. «տէր Վանականը Խաժի ձագ գյուղը չէ, որ իբրև սեփականություն տալիս է Հայրավանքին, այլ այդ գյուղի հոտը, ծուխը»¹⁵: Խաժի ձագ և Բերդ գյուղերը որպես Հայրավանքի թեմական վիճակի բնակավայրեր՝ հիշված են Սիմեոն Երևանցու հանրահայտ երկում. «Ունի վիճակներ Գեղարքունիի նահանգից ... Պարոնբեկի գյուղ, Խշլաձագ, Բերդ, Ազատ քաղաք...»¹⁶, և նրա հանձնարարությամբ իր նոտար Երեմիա Օշականցու՝ 1765 թ. կազմած «Աստուածակառոյց մեծի Աթոռոյս սրբոյ Էջմիածնի համայն նուիրակաց յաղագս նուիրակական արդեանց շրջագայելի քաղաքին հանդերձ գիւղաքաղաքօք նոցին» գրվածքում. «...Ազատ քաղաք, Բերդն, Խըշլաձակ, Նորատու...»¹⁷: Մենք, գրեթե, վստահ ենք, որ վիմագրի Խաժի ձագը վերոհիշյալ վկայությունների Խշլաձագ կամ Խըշլաձակ գյուղն է, որը, ըստ Ջամբուի վերջին հրատարակության ծանոթագրությունների ու քարտեզների հեղինակ Գ. Բադալյանի՝ գտնվել է Հայրավանքի հյուսիսարևմտյան կողմում՝ լճափին: Միանգամայն հավանական ենք գտնում, որ Հայրավանքի վկայագրում հիշատակված տեր Վանականը, որը, թերևս, եղել է թեմի Եպիսկոպոս-առաջնորդը, մեր արձանագրության նույնանուն գործիչն է:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ *Սիմեոն Կաթողիկոս Երևանցի*, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները եւ քարտեզները՝ Գ.Ս. Բադալյանի, Երևան, 2003, էջ 396-397:

¹⁷ *Պ. Հակոբյան*, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003, էջ 183:

Ի տարբերություն Վանականի՝ Վրթանեսը քաջահայտ է մատենագիր ու վիմագիր սկզբնաղբյուրներից: Նա եղել է Բջնիի վանքի ու թեմի առաջնորդը: Այդ կարգավիճակում մասնակցել է Ջաքարե ամիրսպասալարի հրավիրած Լոռիի (1207 թ.) և Անիի (1211 թ.) եկեղեցական ժողովներին,¹⁸ հիշատակված է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու 1209 և 1211 թթ. վիմագրերում,¹⁹ վանքում միաբանների համար կառուցել է օթևաններ: Նա վերջին անգամ հիշատակված է 1217 թ. Գեղարդավանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում:²⁰

XIII դարասկզբի Հայաստանի ամենանշանավոր ռազմաքաղաքական այրերին՝ Ջաքարեին և Իվանեին անդրադառնալու անհրաժեշտություն չենք տեսնում: Խնդրո առարկայի առիթով մատնանշենք միայն նրանց մահվան թվականները, Ջաքարե՝ 1212 թ., Իվանե՝ 1233/4 թ.:

«Ժամն է» ներկայացնենք սպարապետ (ասպարապետ) Ամիր Բուբային: Նա XIII դարի առաջին երկու տասնամյակների իր գործունեությամբ առավել հռչակված գործիչներից է եղել: Քանիցս վկայված է հայկական ու վրացական սկզբնաղբյուրներում: Բուբայի անձի բավական ընդգրկուն բնորոշմանը հանդիպում ենք Ստեփանոս Օրբելյանի հանրահայտ երկում. «Եւ զի էր նորա (աթաբեկ Իվանեի - Գ. Ս.) գործակալ եւ հրամանատար ի վերայ ամենայն իշխանութեանց իւրոց, և աագ հէջբաց մեծ և բարե-

¹⁸ *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 172, 174:

¹⁹ *Գ. Գ. Սարգսյան*, Արձանագրություն Թեղենյաց վանքից, ԼՀԳ, 1977, 8, էջ 103, *Սմբարյանց Մ.*, էջ 319:

²⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժԳ դար, Կազմեց *Ա. Ս. Մաթևոսյան*, Երևան, 1984, էջ 106:

պաշտ իշխանն Բուբակ կոչեցեալ, և էր սա աներ Լիպարտի»²¹: Այլ աղբյուրներում հիշված է նաև «սպարապետ», «իշխանաց-իշխան», վրացական աղբյուրներում՝ «դիդեբուլ», «ամիրայից ամիրա»: Բուբային վերաբերող վկայությունների ժամանակագրությունն ընդգրկում է 1194²²-1223 թթ.: Այս երեսնամյակում մեր խնդրին առնչվող թվականը փնտրելի է 1207-1212 թթ.՝ Գեորգի Լաշայի՝ մորը գահակից հռչակվելու թվից մինչև Զաքարեի մահվան տարին՝ 1212 թ.:

Այժմ փորձենք վերականգնել արձանագրության իրական թվականը վերոշարադրյալ մտորումների հիմամբ, ըստ նշված թվականների. Թամար + Լաշա - 1207-1212 թթ., տեր Վանական - 1211 թ., տեր Վրթանես - 1207-1217 թթ., Զաքարեի մահը - 1212 թ., Ամիր Բուբա - 1194-1223 թթ.: Այս ժամանակագրության մեջ էական են Թամարի ու Լաշայի գահակից իշխանության տարիները և Զաքարե ամիրսպասալարի մահվան թվականը, այսինքն՝ մեր արձանագրությունը կարող էր գրված լինել միայն 1207-1212 թթ. միջակայքում: Թվականի ավելի ստույգ որոշելուն «խանգարում է» մի խնդիր՝ փորագրիչն արդյո՞ք վրիպել կամ սխալվել է միայն տասնավորի հարցում, թե՞ նաև միավորի: Առաջին դեպքում վերականգնելի է Կ-60 թվակիրը, այսինքն վիճաբանի իրական թվականը պետք է լիներ ՈԿ՝ 1211 թ.: Երկրորդի

²¹ *Սյրեփանոս Օրբելյան*, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 353:

²² Այս թվականին հանգել ենք Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսավորիչ տաճարի, արտաքուստ, հարավային պատին փորագրված եռամաս արձանագրության թվագրման մեր հաշվարկների շնորհիվ: Պ. Մուրադյանն այս վկայագիրը թվագրել է XIII դարավերջ - XIV-ի սկիզբ, իսկ Ամիր Բուբային նույնացրել Վայոց ձորի Թանատավանքի այդ ժամանակով թվագրված մի վկայագրում հիշված Բուբայի հետ (Պարույր Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 130):

դեպքում, եթե վերականգնենք Ծ-50 և ենթադրելի միավորը, կարող ենք հանգել ՈԾՁ-1207 թ., ՈԾԷ-1208 թ., ՈԾԸ-1209 թ., ՈԾԹ-1210 թթ., իսկ, եթե մնա Կ թվակիրը, ապա միայն՝ ՈԿԱ-1212 թ.: Մենք առավել հակված ենք ՈԿ-1211 թվականին, այսինքն՝ թվականը եղել է երկտառ՝ հարյուրավոր, տասնավոր:

Հիշատակված հաջորդ, նյութիս համատեքստում, թերևս, ամենակարևոր անձը մեծահամբավ Մխիթար Գոշ վարդապետի աշակերտ հիշված Սարգիսն է: Նշանավոր օրենսգիր վարդապետի՝ մատենագրությունից ու վիմագրությունից հայտնի աշակերտների թվում²³ Սարգիս վկայված չէ, ինչը, անշուշտ չի փաստում այդանուն աշակերտի չգոյությունը: Խնդիր է նաև այն, թե Սարգիսը որտե՞ղ է նրան աշակերտել՝ հին Գետիկում, թե՞ Նորում: Այս հարցի պարզաբանմանը կարող է նպաստել Սարգսի «ի մայրաքաղաքէն Գետկա» գալը, որը, մեր համոզմամբ վերաբերել է Նոր Գետիկին և, իհարկե նկատառելով նաև նշված մյուս անձանց ժամանակագրությունը: Մի քանի խոսք «մայրաքաղաք» բառեզրի վերաբերյալ: Գրաբարի բառարաններում բառիս հիմնական բացատրությանը (քաղաքների մայր՝ ներկայիս իմաստով) զուգահեռ առկա են մեր խնդրին առնչվող այլ իմաստներ. «Մայրաքաղաք. իբր Մետրոպոլիտական կամ արքեպիսկոպոսական եկեղեցի..., որպէս հռչակաւոր մենաստան, կամ Մայրավանք»²⁴: Փաստորեն այս արտահայտությամբ, երբեմն, բնորոշվել են հայ առաքելական եկեղեցու առա-

²³ Համազասպ Ոսկյանը Մխիթար Գոշին նվիրված հոդվածում մատնանշում է Սարկավագ, Հովհաննես Վանական, Պողոս (2 անձ), Կիրակոս, Թորոս, Մարտիրոս վարդապետներին (Հ.Հ. Ոսկեան, Մխիթար Գոշ, Հանդես Ամսօրեա, 1925, 11-12, էջ 554):

²⁴ Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. երկրորդ, Վենետիկ, 1837, էջ 202 (Բ տպագրություն, Երևան, 1981):

վել նշանավոր կենտրոնները, թեմերի կամ վանքերի առաջնորդանիստ ուստանները: «Վանք-մայրաքաղաք» արտահայտության պատշաճ քննությունը կատարել է երիտասարդ գործընկեր, միջնադարագետ-հնագետ Տիգրան Ալեքսանյանը: Հոդվածի վերջում նա եզրահանգում է. «... միջնադարյան վանքերի հիշատակման ժամանակ «մայրաքաղաք» եզրույթն օգտագործելը բնորոշ է եղել հոգեւոր-քաղաքական գործընթացներում կարեւոր դեր ունեցող վանքերի պարագայում: ...դրանք ներկայացնել իբրեւ Աստծոշեն ու նորոգ, բազմամարդ կենտրոն, եկեղեցական կարեւոր հաստատություն»²⁵: Այս առիթով ուշագրավ են Ստեփանոս Օրբելյանի հանրահայտ երկում Տաթևի վանքի բնորոշումները(ինչին անդրադարձել է նաև Տ. Ալեքսանյանը). «մեծ հայրապետարան», «մեծ հայրապետանոց», «սուրբ եպիսկոպոսարան», «զեպիսկոպոսարան՝ զմեծ նախագահ տունն Սիւնեաց», «նախագահ աթոռ և լուսաճեմ տաճար», «մեծ սրբարան և աստուածաբնակ աթոռ», նույնիսկ՝ «սուրբ քաղաքն»: Սակայն, Տաթևի վանքը պատմիչը առավել հաճախ կոչում է «մեծ մայրաքաղաք», «սուրբ մայրաքաղաք»²⁶: Համոզված ենք, որ «մայրաքաղաքէն Գետկա» տեղանվանումը կրող վանքը լիովին «բավարարել է վերը հիշված բնորոշումները»: Ըստ այսմ, մեծ հավանականությամբ, կարող ենք անդել, որ հայր Սարգիսը եղել է Գոշավանքի միաբան, որտեղ աշակերտել է նշանավոր ուսուցչապետ, օրենսգետ և օրենսգիր Մխիթար Գոշին: Մենք կարևորում ենք նաև Սարգսի Վարաժնունիք տեղափոխվելու ժամանակի, թեկուզ, մոտավոր որոշման հարցը: Վանքիս ապագա առաջնորդը քանիցս վկայված է համակառուցի վիճակագրերում,

²⁵ **S. Ալեքսանյան**, Միջնադարյան վանքերը, «մայրաքաղաք» կոչելու հարցի շուրջ, «Էջմիածին», 2016, Ե, էջ 110:

²⁶ **Ստեփանոս Օրբելյան**, էջ 287, 295:

հորջորջված որպես «հայր Սարգիս»: 1201 թ. երկու վիմագրերում առաջնորդի անունը չի հիշատակվում: Ժամանակագրորեն առաջինը մեր «տասնհինգքարյա» վկայագիրն է, վերջինը՝ 1224 թ. ոմն Ջնդանշահի ու նրա կողակից Մարթայի նվիրագիրը, որտեղ առաջնորդը հանդես է գալիս որպես Ջնդանշահի մորեղբայր: Չափազանց ուշագրավ արձանագրություն է պահպանվել հուշարձանախմբի խաչքարերից մեկի թիկունքին: Վիմագրի սկզբնահատվածը, հավանաբար, թվականով հանդերձ կտրված է, սակայն դատելով բովանդակությունից՝ այն հեղինակել է հայր Սարգիսը և թվագրելի է XIII դարի առաջին տասնամյակով, քանի որ խոսք է գնում Ջաքարյան եղբայրների կողմից տարածաշրջանն ազատագրելու (1201 թ.) և լայնածավալ եկեղեցաշինական գործունեություն իրականացնելու մասին.

...ՆՈՔԱԻՔ ՇԻՆԵՅԱՆ ԱԻԵՐԵԱԼ ԵԿԵՂԵ/ՅԻՔ ԵԻ
ԱՋԱՏԵՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ:/ ԵՄ՝ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐՍ ՅՈՒՍԱՅ ԱՅ
ՈՂՈՐ/ՄՈՒԹԻԻՆՆ ԱՅ ԵԻ ԱԻԳՆԼԱԿԱՆ:]²⁷

Հայր Սարգսի առնչությամբ, առնվազն չորս ուշագրավ համընկնումների ենք ականատես լինում Կեչառիսի վանքի գավթի վկայագրերից մեկում.

ԵՄ՝ ՍԱՐԳԻՍ ԿՐԱԽՆԱԻՈՐ Ի ՎԱՆԱՅ/ ԳԵՏԿԱ ՄԻԱԲԱՆԵՅԱ
ՍԲ ՈՒԽՏԻՍ, ԸՍՏ ԻՄ ԿԱՄԻ...²⁸

²⁷ **Գ.Գ. Սարգսյան**, Թեղենյաց վանքի պեղումները և վիմագրական նորույթներ, Հայկ. ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան: Ջեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 70:

²⁸ **Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պոռշեանք Յայոց պատմութեան մէջ, Բ հրատ. Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 316:

դրանք են՝ անձնանունը, հոգևորական լինելը, Գետկավանքը, ժամանակամերձությունը: Նշվածները հնար են տալիս հայր Սարգսի և Սարգիս կրոնավորի անձերի նույնականացման աղերսներ նկատել, իսկ Կեչառիսին «միաբանելը» դիտարկելով մինչ Արտավազավանքը:

Ընթերցողի ուշադրությունն ենք հայցում մի խնդրի, որն առնչվում է հանրահայտ իրավագետ-առակագիր Մխիթարի՝ «Գոռ» մականվանը: Մինչև վերջերս այն մատենագրական վկայությունից զատ այլ հիշատակում չուներ (որպես Մխիթարի մականուն), սակայն մեզ հաջողվեց գտնել «Գոռ»-ի մեկ այլ՝ այն էլ անձնանվան, այն էլ վիմագրական, այն էլ, գրեթե նույն տարածաշրջանում, այն էլ Սարգիս անվան զուգակցությամբ փաստագրում: Միջնադարյան անվանագիտության համար կարևոր նշանակություն ունեցող այս քարտեղեն վկայագիրը պահպանվել է Կոտայքի մարզի Արզական գյուղից մոտ 3 կմ հյուսիս, անտառի մեջ գտնվող Գիուկի կամ Բոլորահատի եկեղեցու որմին. «...Ես Սարգիս, որդի Գոռ/ին, միաբանեցա ՄԲ/ուխտիս եւ տվի ի հ/ալալ ընչից իմ/ոց :Ծ: ԴԿ...»²⁹:

Վիմագրի վերծանության հաջորդ «հանգրվանը» պարոնների կողմից Արտավազավանքը Գոռի աշակերտ Սարգսին հանձնելը փաստող բառակապակցությունն է: Նախ՝ ովքե՞ր են պարոնները: Այդ դերում կարող էին հանդես գալ երկրի իշխանավոր-տերերը, թերևս նաև տվյալ տարածաշրջանի իշխողները: Վիմագրում այդպիսիք են երկրի գլխավոր իշխանավորներ ամիրսպասալար Ջաքարեն, աթաբեկ Իվանեն և սպարապետ

²⁹ *Սարգսյան Գ. Գ.*, Գիուկ-Բոլորահատի վանքը, ՊԲՀ, 1983, 1, էջ 131: Այս հոդվածի հրատարակությունից հետո, վանքի անվան հիշատակությամբ ևս մեկ վկայագրի վերծանությամբ հաջողվեց ճշգրտել տեղանունը՝ Բոլորահատ:

Ամիր Բուբան: Վերջինիս կարելի է դիտարկել նաև տարածաշրջանի «տեր ու տնօրեն»: Դատելով այն իրողությունից, որ Բուբան հիշված է երկիցս, առաջինը Ջաքարյան եղբայրների հետ՝ «հավուր պատշաճի», իսկ երկրորդը, կարծես թե որպես նվիրատու (թերևս Արտավազավանքի), ինչի առիթով Ս. Աստվածածնի տոնին «ամեն եկեղեցիքս» մատուցվել է պատարագ, «պարոններ» են հանդիսացել բոլորը՝ Ջաքարյան եղբայրները՝ «ի պաշտոնե», իսկ Ամիր Բուբան՝ բուն պարոն-նվիրատուն:

Վերն անդրադարձանք հինգերորդ, գրեթե, եղծված տողի պահպանվածության վիճակին և վերձանելիությանը, որտեղ տեր Վանականից զատ, այլ որոշակիություններ առկա չեն:

Վեցերորդ տողասկզբում ԾԱՆՆԷ անորոշ տառակապակցությունից հետո կարդացվում է «ՁՍԲ ՈՒԻՍՏՆ ԶՅՈՎԱ.ՆՆՈՒ»: Թվում է, թե այստեղ խոսքը Արտավազավանքի առաքելական անվան մասին է, սակայն հուշարձանի մյուս վիմագրերից հայտնի է, որ վանք-անապատը կամ գլխավոր եկեղեցին կոչվել է Ս. Աստվածածին: Սույն թնջուկի առումով նշենք, որ հուշարձանի երկու վիմագրերում պատարագներ են հատկացվել «ի տանի Յոհաննու»:

Հիշյալ բառակապակցությանը հաջորդում է ՇԻՆԵՑԻ բայը, որը, կարծում ենք, վերաբերում է նախորդ, առայժմ անորոշ սուրբ ուխտին: Տողասկզբում պարզորոշ վերձանվող ԾԱՆՆԷ-ն, որը համարում ենք որպես բառավերջ, դժվարանում ենք վերականգնել: ԾԱՆՆԷ տառախմբի ամբողջական բառը և իմաստը վերականգնելու մղումով առաջարկում ենք վերձանության մի վարկած՝ փորձելով իմաստավորել նշյալ հատվածը: Վարկածի «նշանակետը» տողասկզբի Ծ տառն է: Նկատի ունենալով փորագրողի «անփոյթ» և «անուշադիր» կերպարը, ինչի ցցուն առհավատջյան է թվականի «պատմությունը», կարող ենք

ենթադրել, որ նա «չի բավարարվել» մեկ վրիպմամբ և կարող էր թույլ տալ նաև այլ վրիպակներ, օրինակ նշված Ծ-ն փորագրել է Մ տառի փոխարեն, ինչը հնար կտար մեզ վերականգնելու [ՀԻՂՄԱՆՆԵ բառը՝ «հիմքից, հիմամբ» իմաստով, որով տրամաբանական հանգուցալուծմամբ կարտահայտվեր Սուրբ Հովհաննու կամ Հովհաննեսի անվամբ ուխտը (վանքը կամ եկեղեցին) հիմքից կառուցելու կամ նորոգելու իրողությունը:

Հաջորդիվ արձանագրված է անշարժ գույքի նվիրատվություն համաձայն որի՝ Ավան բնակավայրի «մի խումբ» տանուտերեր վանքին նվիրել են Փատկանց վերի հողի այգիները: Մեր համոզմամբ «Փատկանց»-ը տեղանվան վերածված տոհմանուն է: Խնդրահարույց է ԱԻԱՆ թվացյալ տեղանվան պարզաբանումը: Այն կարելի է երկկերպ մեկնաբանել՝ որպես տեղանուն կամ որպես բնակավայրի տեսակ: Հայաստանում այս անվամբ բնակավայրերի առկայությունը խիստ սակավադեպ է: Արևելյան Հայաստանում դրանք երեքն են. Երևանի հյուսիս-արևելքում գտնվող նույնանուն գյուղը, ՀՀ Արագածոտնի մարզի համանուն բնակավայրը և վերջինիս մոտ եղած Ավան միջնադարյան գյուղատեղին: Տեղադրության տրամաբանությամբ դժվար է սրանցից որևէ մեկը նույնացնել վիմագրում նշված Ավանի հետ: Երկրորդ տարբերակի հաշվառմամբ տարակուսում ենք, թե մերձակա որ՝ բնակավայրն էր այդպես անվանակոչվել: Իսկ, միգուցե գրիչը նկատի է ունեցել հենց տեղի, այսինքն՝ Արտավազավանքն իր մեջ ընդգրկող բնակավայրի տանուտերերին:

Այսքանով, կարծես ավարտվում է նվիրատվությունների փաստագրումը և այնուհետ, ըստ կարգի, վանահայրը «հանդես է գալիս պատասխան խոսքով», այն է՝ իր և միաբան եղբայրների հոժար կամքով Ս. Սարգսի տոնին հաստատում են պատարագներ բոլոր նվիրատուների համար (ՊԱՏԱՐԱԳՆ ԱՄԷՆՈՒ),

ինչն ուղեկցվում է մեկ եզ մատաղ անելու անհրաժեշտության փաստմամբ: Վիմագիր տեքստերում խիստ սակավադեպ է մատաղի արարողության վիմագրման դեպքերը: Բառեզրիս ուշագրավ օրինակ է պահպանվել Վայոց ձորի Ցաղաց քար վանքի վիմագրերից մեկում: Մեկնաբանությունն առավել ընկալելի լինելու համար նպատակահարմար ենք գտնում մեջբերել անհրաժեշտ ամբողջ հատվածը.

ԵՍ՝ ԼԻԱՆՈՍ ՈՐԴԻ ՍԱՄՍՈՆԱՅ ԱՄՈՒՍԻՆ/ԻՄ ԱՐՈՒՋ
ԽԱԹՈՒՆՍ ԹԱՂԵՑԱՔ ՄԵՐ ՍԱՄՍՈՆ ՈՐԴԻՍ Ի ՎԱՆՔՍ.
ՄԵՔ ԷԼ ԳԵՐԵԶՄԱՆ ՀԱՏԱՔ, ՄԱՏԱՂ ԱՐԱՐԱՔ ԵՒ ԵԼՔ ՄԵՐ
ԱՌ ՔՍ:³⁰

Այստեղ, առնվազն երեք ուշագրավ երևույթ է վկայված՝ ամուսիններն իրենց Սամսոն որդուն թաղել են վանքի տարածքում, ինչն արդեն իսկ խոսում է Լիանոսի և Արուզ-խաթունի որոշակի դիրքի մասին, որի շնորհիվ միաբանությունը պատիվ էր արել նրանց: Երկրորդը՝ հանգուցյալի ծնողները գերեզման են «հատել»: Չենք կարծում, որ խոսքը գերեզմանափոսը ֆիզիկապես փորելու մասին է, հակված ենք այստեղ դիտարկել գերեզմանատեղ հատկացնելուն, ինչով կարելի է պայմանավորել երրորդ բառակապակցությունը՝ մատաղ արեցինք: Արդ, ո՞րն էր մատաղի շարժառիթը: Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգում, որպես բավական լայն տարածում գտած իրողություն, մատաղը կիրարկվել է IV դարից: Այն դիտարկվել է «Աստծուն

³⁰Դիվան հայ վիմագրության, պրակ III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց **Ս.Գ. Բարխուդարյան**, Երևան, 1967, էջ 144-145, արձ. 438:

ընծայաբերվող նվեր»³¹և կատարվել է «հիմնականում երեք նպատակով. ա. Փրկության հույսի և մեղքերի թողության համար, բ. Լնջեցյալների հոգու հանգստության համար, գ. Աստծու տված շնորհների դիմաց երախտագիտություն հայտնելու համար»³²: Կարծում ենք, որ մեր վկայության համատեքստում կարելի է ենթադրաբար կիրառելի համարել ինչպես երկրորդ, այնպես էլ երրորդ «նպատակները», այսինքն՝ երիտասարդ Սամսոնի «հոգու հանգստության» կամ միաբանության կողմից հանգստատեղ հատկացնելուն «երախտագիտություն հայտնելու» համար: Իսկ ի՞նչ առնչությամբ էր մատաղ արվել Արտավազավանքում: Մեկ եզ մատաղ անելու վկայությանը նախորդել է պարոնների (Ջաքարյան եղբայրներ և Ամիր Բուբան) կողմից Գոշի աշակերտ Սարգսին, թերևս, վանքի առաջնորդ կարգելու

(ՊԱՐՆԱՅՔՍ ՏՎԻՆ ԶԱՐՏԱԻԱԶԱՎԱՆՔՍ ԻՆՁ), (ԶՍԲ ՈՒԽՏՆ ՇԻՆԵՑԻ), (ԱԻԱՆԱ ՏԱՆՈՒՏԷՐՔՆ ՏՎԻՆ ԱՅԳԻՔ Ի ՓԱՏԼԿԱՆՑ ՎԵՐԻ ՀՈՂՆ)

մասին հաղորդումը: Ըստ այսմ, հնարավոր ենք համարում մատաղի մատուցման շարժառիթը դիտարկել հենց վերը նշված հանգամանքների համատեքստում (պաշտոնակալություն և նվիրատվություն): Կարծում ենք՝ խնդրին որոշակիորեն կարող է առնչվել Հայոց Սիոն Ա Բավոնեցու կողմից՝ 768 թ. Պարտավքաղաքում հրավիրած եկեղեցական ժողովի ընդունած 24 կանոններից յոթերորդը՝ «Վանք շինեցան ի գեալոս, զի անդ հանգիցեն առաջնորդք եկեղեցոյ եւ հիւրք եւ աղքատք. եւ զհաց նուիրացն արհնութեան ի տանսն յերիցեղբարցն տանցն եւ ի

³¹ «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», էջ 691:

³² Նույն տեղում, էջ 692:

քահանայիցն, զոր անդր կարգեալ եղև, եւ **զմատաղենիս** եւ զհատ ի վերայս առնուն գեղականքն, եւ վարձ տան նահապետի...»: ³³

Մատաղացու լավագույն կենդանի համարվում էր արջառը՝ «տաւար, ընդհանուր անուն կովի, ցուլի, եզան, հորթի և երինջի»³⁴: Վիմագրագետ Ս. Ավագյանն իր «Բառաքննություն...»-ում առանձին անդրադարձ է կատարում «մատաղիս» բառեզրին, քննության առնելով դրա՝ ցարդ հայտնի երեք վկայությունները. նվիրվել են «զԲախերին մատաղիսն»³⁵ (Արցախի Վաղուհաս գյուղ), «զիմ Հակուղենա մատաղիսն»³⁶, «զնեցի մատաղիս»³⁷: Ս. Ավագյանը, ցավոք, բառիս միայն «մատաղաշ, փափուկ, դեռատի, մատաղահաս» իմաստներն է դիտարկում, եզրահանգելով, որ «մատաղիս» ձևը «ամենուրեք հայցական հոլովով է դրվում ..., որի ուղղականը վերականգնվում է մատաղիք»³⁸: Իսկ, միգուցե, այստեղ խոսք է գնում մատաղի կամ մատաղացուի մասին:

Բնագրում «մատաղ»-ին հաջորդող եռատառի իմաստը մնում է թեական և դրա գլխավոր «մեղավորը» I և II քարերի կցվածքում փորագրված տառն է, որն իր գծագրությամբ անհամեմա-

³³ Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի**, Երևան, 1971, էջ 8:

³⁴ **Հր. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Երևան, 1971, էջ 335:

³⁵ **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 199, (վերցրել է Խ. Դադյանից՝ «Արարատ», 1896, էջ 81):

³⁶ Նույն տեղում, էջ 200 (Դիվան հայ վիմագրության, պր. 5, Երևան, 1982, էջ 127):

³⁷ Նույն տեղում:

³⁸ **Ավագյան Ս.**, Վիմական արձանագրությունների բառաքննություն, էջ 201:

տելի է վիմագրի որևէ տառածևի (այս տառին անդրադարձել ենք վերևում): Երեք տառերից առաջին երկուսը՝ ԻՆ, պարզորոշ վերծանվում են: Երրորդին, տրամաբանորեն, կարող էին հարիր լինել 2 կամ 2 տառերը, անկախ դրանց՝ վիմագրում առկա ձևերից: Այսինքն, այստեղ կարող ենք կարդալ «:Ա: եզն մ/ատաղ **ինձ** անխափան», կամ նույնը՝ «ինձ»-ի փոխարեն «**ինչ**», չնայած բովանդակային առումով առավել նախընտրելի է թվում առաջինը, սակայն տրամաբանությունը որոշակիորեն «կաղում է»:

Արձանագրության հետագա շարադրանքում հայր Սարգիսը մատնանշում է իր ջանքերը՝ «բազում աշխատութեամբ», վանքի եկեղեցիների և, ընդհանրապես, միաբանության գործունեությունը, թերևս, վերականգնման ուղղությամբ: Ուշագրավ է վանահոր մեկնաբանությունը իր արարմունքի պատճառ-նպատակների առնչությամբ, այն է՝ միաբան եղբայրների բազմաբնույթ կարիքները հոգալու և այդ գործընթացները կարգավորելու համար:

Բավական խնդրառու է արձանագրության մնացյալ հատվածի մեկնաբանումը, ինչի հիմնական պատճառներից է վերջին երկու տողերի կոտրված, եղծված ու բացակայող հատվածների առկայությունը: Սակայն, պարզ կարդացվող ու վերականգնված որոշ բառեզրեր ու արտահայտություններ հնար են տալիս շարադրանքում դիտարկել հողամշակությանն ու անասնապահությանը վերաբերող որոշ հարկատեսակների ապահարկման գործառույթների «սահմանում» կամ հիշված կենդանիների նվիրատվություն: Վարկածային սույն մտահանգման թվացյալ հիմնավորում կարող ենք մատնանշել «ոչխար», «[ն]ախրէպահ», «ծի», «արավար», «խտտհար»՝ վիմագրերում սակավադեպ փաստագրված բառեզրերը:

Վիմագրերում «ոչխար»-ը հիշատակվում է միայն որպես նվիրատվության առարկա և բավական հաճախ: «Զիու » նվիրատ-

վության կամ այլ գործառույթի դեպքեր մեզ չեն հանդիպել, բացառությամբ մեկի, որը հմտալից քննարկել է Ս. Ավագյանը: Կարբիի գյուղամիջյան եկեղեցու զանգակատան որմին փորագրված և հեղինակի կողմից առաջին անգամ վերծանված մի չափազանց ուշագրավ վկայագրում Վաչուտյանց Թեոդորոս-Չրքինը 1343 թ. սահմանել է, որ «զայս արձան գրեցաք, որ այլ ի Կարբի ճանպորդի ձիալախ (հեծնելու, լծելու կամ բեռնակիր ձի-Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 195) չտան», այսինքն՝ «այլևս Կարբի գյուղաքաղաքում ճանպորդի ձի ավախ չտան, այսինքն՝ վերացնում է իլխանության հաստատած փոխադրամիջոցի՝ ավախ, ձի ավախ պարտավորությունը»³⁹:

ԵՆԴԱԽՐԷՊԱԿ բառեզրը միանգամայն պարզ իմաստ ունի՝ նախիրը (խոշոր անասունի հոտ) արածեցնող, պահպանող հովիվ: Այս տառակապակցությամբ բառս գրաբարով վկայված չէ, հանդիպում է «նախրապան», «նախրորդ» ավելի ուշ՝ «նախրչի», նաև՝ «նախրարած» ձևերով⁴⁰: Նույն պատկերն է նաև գավառական բառարանու⁴¹: Դատելով «Ին լախրէպահ»-ի և նախորդ՝ «ոչխար» բառերի արտահայտչաձևերից, այն է՝

ՈՉԽԱՐՈՒ ԵՆԴԱԽՐԷՊԱԿԷ,

թվում է, թե խոսքն ուղղված է ոչխարի հոտի պահապան-արածեցնողին և լեզվական առումով ավելի տրամաբանական է հնչում: Սակայն հայտնի է, որ նախիրը դա խոշոր եղջերավոր անասունների՝ եզ, կով, հորթ, տավար, գոմեշ, խումբն էր, իսկ ոչխարներինը հոտն էր: Միգուցե վիմագրի հեղինակի՝ այս բո-

³⁹ Նույն տեղում, էջ 196:

⁴⁰ *Սրբ. Մայխասեանց*, Հայերէն բացատրական բառարան, հտ. 3, Երևան, 1944, էջ 438:

⁴¹ *Հր. Աճառեան*, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 809:

վանդակային անհամաձայնությունը կարելի է որակել որպես պատահական լեզվական վրիպում:

Վիմագրի ութերորդ տողում առկա է ԱԻՐԱՎԱՐ ԱՌՆԷ բառակապակցությունը: «Աւրավար» (գրաբարի բառարաններում՝ օրավար) բառեզրը, ի տարբերություն բնագրում հիշված մյուս բառեզրերի՝ քանիցս վկայված է վիմագրերում: Բառարաններում այն մեկնաբանվում է որպես «1. Մի օրվայ վար՝ հերկ, 2. Հողի՝ մանավանդ վարելահողի չափ (որքան մի գութանը կարող է վարել մի օրում) հավասար է մօտաւորապէս 8/11 հեկտարի»⁴² և բոլոր դեպքերում որպես նվիրատվության առարկա՝ պարտադիր նշելով հողակտորների քանակը՝ 1, 2, 30, 40, 50 օրավար (աւրավար) հող⁴³: Չնայած «աւրավար»-ին չի հաջորդում այլուստ պարտադիր վկայված «հող»-ը, այդուհանդերձ, հակված ենք վերջինիս բացակայությունը համարել վրիպակ: Միաժամանակ հարկ ենք համարում մատնանշել «աւրավար» բառեզրի մեկ այլ մեկնաբանություն՝ «մի օրվայ վար՝ հերկ»⁴⁴, ինչը չի նկատառում «հող»-ի գործածումը: Խնդրո առարկա բառակապակցության իմաստային մեկնաբանության տեսակետից կարևորում ենք «աւրավար»-ին հաջորդող «առնէ»-ն, որը բառարաններում բացատրվում է մի շարք իմաստներով. «1. ձեռք բերել, յուրացնել, հկռ-տայ: 2. ուժով ձեռք բերել և տիրանալ: 3. գնել, հկռ-ծախել: 5. գրաւել, յափշտակել, կողոպտել»⁴⁵: Դատե-

⁴² **Սպ. Մայխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հտ. 4, Երևան, 1945, էջ 615, Նոյնը նաև Ռուբեն Ղազարյան, Հենրիկ Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 826:

⁴³ Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին, **Ս.Գ. Բարխուդարյան, Կ.Գ. Ղաֆադարյան, Ս.Տ. Սաղումյան**, Երևան, 2012, էջ 42(34), 63(75), 102(177), 303(647), 320(320):

⁴⁴ **Սպ. Մայխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հտ. 4, էջ 615,

⁴⁵ **Սպ. Մայխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հտ 1, Երևան, 1944, էջ 230:

լով այս երկբառ եզրույթի իմաստային մեկնություններից՝ ենթադրելի է, որ նկատի են առել նվիրված հողը յուրացնելը, հափշտակելը:

Հաջորդ ուշագրավ փաստը «խոտհար» բառեզրի առկայությունն է: Բառարաններում սույն եզրույթը վկայված է տարածն տառակապակցություններով՝ «**խոտահարի**–խոտ հարելու՝ հնձելու գերանդի, **խոտահարկ**–խոտի հարկ, որ վճարվում է մի որոշ տեղում խճոտ քաղելու իրավունքի համար»⁴⁶, «**խոտհարք**–1. խոտ քաղելու ժամանակը, 2. խոտ քաղելու տեղ, խոտատեղ»⁴⁷: Միջին հայերենի բառարանում «**խոտահար, խոտահարք**» –ը բացատրվում է որպես «խոտհարք, խոտատեղ»⁴⁸: Գրեթե նույն իմաստներով է մեկնաբանված «Հայոց բառ ու բան»-ում, «Հայերէն գաւառական բառարան»-ում» և այլուստ: Բառեզրիս վիմագիր օրինակները սակավ են: Սանահինի եռանավ սրահի 1217 թ. մի կարևոր նվիրագրում Համագասայան-Մամիկոնյան Աշոտ իշխանն իր որդիներով, ի թիվս այլ ինչքի, նվիրում է նաև «սարին խոտահարի տեղի»-ն⁴⁹ (կարծում ենք, որ նվիրվել է սարում գտնվող խոտհարքը՝ խոտ քաղելու տեղը): Չափազանց ուշագրավ է Բագնայրի վանքի Ս. Գրիգոր տաճարի ճոխ նվիրագրերից մեկը, որում բազմաթիվ ու բազմապիսի շարժական ու անշարժ գույքի «ցանկում» մատնանշված է «յիմ խոտահարն. Ճ բարդ խոտի տեղ»⁵⁰: Ակներև է նախորդի հետ իմաստային եզրի առկայությունը՝ «խոտահարի տե-

⁴⁶ *Սր. Մալխասեանց*, Հայերէն բացատրական բառարան, հտ 2, Երևան, 1944, էջ 287:

⁴⁷ Նույն տեղում, էջ 288:

⁴⁸ *Ռ. Ղազարյան, Հ. Ավերիսյան*, Միջին հայերենի բառարան, էջ 329:

⁴⁹ Դիվան հայ վիմագրության, պր. IX, էջ 55, արձ. 62:

⁵⁰ Հայերէն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի եւ Մարմաշինու, տեղւոյս վրայ հաւաքեց եւ հրատարակեց հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ *Կ. Յ. Բասմաջեան*, Պարիս, 1931, էջ 372:

ղի»–«խոտահարն ... խոտի տեղ», սակայն երկրորդում խոտատեղն ավելի է որոշակիացված: «Բարդ» բառեզրը թարգմանված է «Դեզ խրձանց կամ հնձոց արմտեաց և խոտոյ...»⁵¹, խոտի դեզ, բաղկացած 30-40 խրձից, իսկ ավելի մանր խրձերի դեպքում՝ 100 խրձից⁵²: Ենթադրելի է, որ վկայագրում փաստված է մի խոտհարքի նվիրատվություն, որտեղից կարելի էր հավաքել 100 խուրձ խոտ:

Հաջորդիվ պայմանականորեն վերծանել ենք «կամ Ա եղանաց» տառակապակցությունը: Սա վիմագրի իրապես եղծված սակավադեպ հատվածներից է: Չնայած «եղանաց»՝ **եղանների** առաջին հայացքից հասկանալի բառի (ԵՂԱՆ, ի, ագ. Գործի երկժանի կամ երեքժանի. ... Ջեղանն, որով գկալն սփռեն, ...: Կազմէ գդեզս եղանաւ. Ստեփ. Լեհ:⁵³) առկայությանը՝ դժվարանում ենք որևէ արժանահավատ ստուգաբանություն ներկայացնել:

Մի հարցում, գրեթե, համոզված ենք՝ վերջին երկու տողերում փաստագրված իրողությունները վերաբերում են արված նվիրատվությունները խափանողներին սպասվող Աստծու նզովքին:

Սույն վիմագրագիտական անդրադարձով փորձեցինք համակողմանի քննել, մեր կարծիքով, խիստ ուշագրավ ու կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեցող մի (նաև՝ մեկ) քարեղեն վկայագիր, ինչը որոշակիորեն կարևորում ենք հետագա նմանօրինակ աշխատանքների ստեղծման ակնկալիքով:

⁵¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ.առաջին, 2–րդ հրատ., Երևան, 1979, էջ 443:

⁵² **Սյր. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, հտ 1, էջ 386:

⁵³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ.առաջին, 2–րդ հրատ., էջ 652:

НОВОНАЙДЕННАЯ НАДПИСЬ ИЗ МОНАСТЫРЯ АРТАВАЗАВАНК

Историко-архитектурный комплекс Артавазаванк, состоящий из двух церквей, расположен на западной окраине Артаваз Котайкского региона (марза) РА. В ходе проведенного в 1950-х гг. предреставрационных раскопках, были обнаружены более двух десятка чисто тесаных камней с эпиграфическими надписями.

Исследование этих камней показало что 15 из них относятся к одной большой надписи, состоявшей из 10-и строк. Текстуальный анализ надписи выявил отсутствие по меньшей мере трех камней, одну – в конце первого ряда, а другие – во втором.

Сама надпись, содержащая данные о строительстве, подношениях церкви, упорядочении налогообложения и пр., имеет исключительную источниковедческую значимость. При этом, приведенная в тексте дата надписи – 1171 г., явно диссонирует с биографическими данными упомянутых в ней исторических персонажей. Здесь упомянуты, в частности, грузинская царица Тамара и ее сын и сопра-

Новонайденная надпись из монастыря Артавазанк

витель Георгий Лаша, наместники Армении Иванэ и Закарэ Закаряны, владетель области Амир Бупа, а так же прославивший сявосстановлением артавазанкской братии и строительством рядацерквей, ученик знаменитого Мхитара Гоша – Саргис.

Комплексный анализ первоисточников позволяет отнестиданнуюнадпись к 1207-1212 гг., скорее всего – к 1211 году.

A NEWFOUND EPIGRAPH FROM ARTAVAZAVANQ

The Artavazavanq group of monuments is situated in the western outskirts of the village Artavaz, Kotayq province of the Republic of Armenia. Two main monuments are churches. In 1950s the monuments were thoroughly cleaned and partly unearthed, in course of which were found inscribed construction stones. Our research has identified 15 of these stones carrying one long Armenian inscription, which is scrutinized in this article in epigraphical and historical terms.

Putting together the preserved stones and the analysis of the contents of the inscription ascertained as highly possible that the original inscription had ten rows, inscribed on two lines of construction stone bricks. Certain parts of the inscription mention on the originally present but hitherto unfound three inscribed narrow stones: one at the end of the first line of stones, two others inside of the second line.

This inscription is exceptional as a source of historiographical information. Its contents are complex, informing us about the construction works, donations and tax regulations.

The inscription is dated to 1171, which, by all means, should be erroneous, as the date is not supported by prosopographical data known about the named in inscription persons. The analysis of the mentioned sources highlighted the years between 1207 and 1212 as more probable. The author of this article suggests 1211 as the true date of the inscription. The persons, whose names are inscribed in situ, are as follows: the Georgian Queen Tamar and her thronemate son George “Lasha”, the Armenian senior princes Zaqare and Ivane, the areal landlord Amir Bupa, and certain Sargis as a founder of Artavazavanq abbacy, the builder of its churches, in earlier period one of disciples of Mkhitar Gosh, the abbot of the New Getik monastery.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալեքսանյան Տ.**, Միջնադարյան վանքերը «մայրաքաղաք» կոչելու հարցի շուրջ, «Էջմիածին», 2016, Ե, էջ 107-111:
2. **Աճառեան Հր.**, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
3. **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, հտ. 1, Երևան, 1971:
4. **Ավագյան Ա.**, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978:
5. **Գարեգին Կաթողիկոս Յովսէփեան**, Խաղբակեանք կամ Պողոշեանք Յայոց պատմութեան մէջ, Բ հրատ. Անթիլիաս-Լիբանան, 1969:
6. **Գիրք թղթոց**, Մատենագիտութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901:
7. Դիվան հայ վիմագրության, պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց **Ա.Գ. Բարխուդարյան**, Երևան, 1973:
8. Դիվան հայ վիմագրության, պր. IX, Լոռու մարզ, կազմեցին **Ա. Գ. Բարխուդարյան**, Կ.Գ. Ղաֆադարյան, Ս.Տ. Սահումյան, Երևան, 2012:
9. Կանոնագիրք Հայոց, հտ. Բ, աշխատասիրությամբ՝ **Վ. Հակոբյանի**, Երևան, 1971:

10. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
11. **Հակոբյան Պ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2003:
12. **Համազասպ Ոսկյան**, Մխիթար Գոշ, «Հանդես ամսօրեայ», 1925, թ. 11-12, էջ 548-561:
13. Հայերեն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի եւ Մարմաշինու, Տեղոյս վրայ հաւաքեց եւ հրատարակեց հանդերձ ֆրանսերէն թարգմանութեամբ **Կ.Յ. Բասմաջեան**, Պարիս, 1931, էջ 372:
14. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
15. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հտ 1, Երևան, 1944:
16. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հտ 2, Երևան, 1944:
17. **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հտ. 4, Երևան, 1944:
18. **Մաղաքիա Օրմանյան**, Ազգապատում, հտ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001:
19. **Մուրադյան Պ.**, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977:
20. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. առաջին, 2-րդ հրատ. Երևան, 1979:
21. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. երկրորդ, վերահրատ., Երևան, 1981:
22. **Սարգսյան Գ.Գ.**, Արձանագրություն Թեղենյաց վանքից, ԼՀԳ, 1977, 8, էջ 100-107:

23. **Սարգսյան Գ.Գ.**, Գիուկ-Բոլորահարի վանքը, ՊԲՀ, 1983, 1, էջ 125-135:
24. **Սարգսյան Գ.Գ.**, Թեղենյաց վանքի պեղումները և վիմագրական նորոյթներ, Հայկ. ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան: Զեկուցումների թեզիսներ, Երևան, 1987, էջ 70:
25. **Սիմեոն Կաթողիկոս Երևանցի**, Ջամբո, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վ. Գ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները եւ քարտեզները՝ Գ. Մ. Բադալյանի, Երևան, 2003:
26. **Սմբատյանց Մ.**, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, Վաղարշապատ, 1890:
27. **Ստեփաննոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիւսական, Թիֆլիս, 1910:
28. **Ուխտանէս Եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, գիրք Բ, Անթիլիաս, 2010:
29. **Ուխտանէս Եպիսկոպոս**, Հայոց Պատմութիւն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Վ. Առաքելեանի, Երեւան, 2006:
30. «Քրիստոնյա Հայաստան». հանրագիտարան, Երևան, 2002:

ԼՈՒՍԱՊԱՏԿԵՐՆԵՐ՝

1. Լուսանկարները՝ հեղինակի և երջանկահիշատակ Հարություն Ստեփանյանի (2014-2018 թթ.):



Նկ. 1. Համակառույցի ընդհանուր տեսքը արևմուտքից



Նկ. 2. Եռախորան եկեղեցու ներսույթը արևմուտքից



Նկ. 3. Եռախորան եկեղեցու ներսույթը հարավից




Նկ. 4. Եկեղեցու մանրակերտ, գտնվում է բազիլիկ եկեղեցում




Նկ. 5. Խաչքարախումբ համակառույցի հարավում



Նկ. 6. Խաչքար (911 թ.)



Նկ. 7. Խաչքար (X-XI դդ.)



Նկ. 8. Խաչքար (XIII դ.)



Նկ. 9. Պատուհանի քանդակազարդ վերնամաս




Նկ. 10. Մարդու, թերևս շինարար վարպետի պատկերաքանդակ



Նկ. 11. Արտավազականքի փմագրերից



Նկ. 12. Սարգիս Կրոնավոր Գետկեցու նվիրագիրը



Նկ. 13 Հայր Սարգսի արձանագրությանը խաչքարը



Նկ. 14. Վիճագրագիտական պրպտումներ

ՆՈՐԱՀԱՅՑ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՏԱՎԱՋԱՎԱՆՔԻՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ.....	7
ՆՈՐԱՀԱՅՑ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՏԱՎԱՋԱՎԱՆՔԻՑ.....	9
ՎԻՄԱԳՐԻ ՊԱՀՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	15
ԱՌԱՋԻՆ ՔԱՐԱՇԱՐ.....	17
ԵՐԿՐՈՐԴ ՔԱՐԱՇԱՐ.....	21
ՀՆԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	26
ԲՆԱԳՐԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆԵՐ.....	26
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	37
ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ.....	39
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	64
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԱՐԱՎԱՋԱՎԱՆՔԻՑ.....	67

НОВОНАЙДЕННАЯ НАДПИСЬ ИЗ МОНАСТЫРЬЯ АРТАВАЗАВАНК

СОДЕРЖАНИЕ

ОТ ОТДЕЛА ЭПИГРАФИКИ.....	7
НОВОНАЙДЕННАЯ НАДПИСЬ ИЗ МОНАСТЫРЯ АРТАВАЗАВАНК.....	9
ЭПИГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ.....	15
ПЕРВАЯ КАМЕННАЯ КЛАДКА	17
ВТОРАЯ КАМЕННАЯ КЛАДКА.....	21
ПАЛЕОГРАФИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ.....	26
ТЕКСТУАЛЬНЫЕ ВОССТАНОВЛЕНИЯ.....	26
ПОЛНОЕ ВОССТАНОВЛЕНИЕ НАДПИСИ.....	37
АНАЛИЗ СОДЕРЖАНИЯ	39
СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ	64
ФОТОГРАФИИ АРТАВАЗАВАНКА	67

A NEWFOUND EPIGRAPH
FROM ARTAVAZAVANK

CONTENTS

FROM THE DEPARTAMENT OF EPIGRAPHY	7
A NEWFOUND EPIGRAPH FROM ARTAVAZAVANK.....	9
THE STATE OF PRESERVATION AND DECIPHERMENT OF THE EPIGRAPH.....	17
THE FIRST COURSE OF STONES OF THE EPIGRAPH	17
THE SECOND COURSE OF STONES OF THE EPIGRAPH .	21
PALEOGRAPHIC FEATURES	26
ORIGINAL TEXT RECOVERY.....	26
THE COMPLETE DECIPHERMENT OF THE EPIGRAPH....	37
CONTENT REFERENCE	39
BIBLIOGRAPHY	64
PHOTOGRAPHS.....	67

ՆՈՐԱՀԱՅՏ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՏԱՎԱԶԱՎԱՆՔԻՑ
НОВОНАЙДЕННАЯ НАДПИСЬ ИЗ МОНАСТЫРЯ
АРТАВАЗАВАНК
A NEWFOUND EPIGRAPH FROM ARTAVAZAVANK

ԳԱԳԻԿ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
ГАГИК Г. САРГСЯН
GAGIK G. SARGSYAN

Իմ քաղաքի՝ Արսեն Հարությունյան
Համակարգչային ձևավորումը՝ Անահիտ Գալստյանի

Տպագրված է «Հայկարիի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115
Չափսը՝ 60×84 1/16: Թուղթ՝ օֆսեթ: 5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 250 օրինակ

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0669190

A II
108301

Fragmentary ancient text on a dark, textured surface, possibly a metal plate or stone tablet. The text is arranged in several horizontal lines, with some characters appearing to be in a cuneiform or similar ancient script. The fragment is heavily corroded, particularly on the right side, where the surface is covered in a thick, orange-brown rust. The text is partially obscured by the rust and the irregular edges of the fragment.